Botschaft
der Bundesrepublik Deutschland
Eriwan

HELSINKI CITIZENS ASSEMBLY

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Իրավապաշտպանության և քաղաքացիական ակտիվության

Ձեռնարկ համայնքային խմբերի համար

Վանաձոր
2014

Botschaft
der Bundesrepublik Deutschland
Eriwan

HELSINKI CITIZENS ASSEMBLY

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Իրավապաշտպանության և քաղաքացիական ակտիվության

Ձեռնարկ համայնքային խմբերի համար

Վանաձոր
2014

Հեղինակային խումբ՝

Արթուր Սաքունց
Անի Չատինյան
Մարիաննա Գրիգորյան
Օլյա Ազատյան
Վարդինե Գրիգորյան

© Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

«Սիմ Տպագրատուն», Վանաձոր, 2014 թ.

Սույն ձեռնարկը կազմվել է Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից Հայաստանում Գերմանիայի Դաշնության դեսպանատան հովանավորությամբ իրականացվող «Տեղական իրավապաշտպանության խթանում» ծրագրի շրջանակներում: Ձեռնարկում ներկայացված նյութը և կարծիքները չեն արտացոլում ֆինանսավորող կազմակերպության դիրքորոշումը:

Բովանդակություն

Ներածություն 5
Համայնքային պատասխանատվություն 6
Մարդու և քաղաքացու իրավունքներ 8
Հավասարության իրավունք.....11
Կյանքի իրավունք.....12
Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք 13
Խոշտանգումներից անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք.....14
Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք.....15
Բնակարանի անձեռնմխելիության իրավունք 15
Խղճի, մտքի և կրոնի ազատություն 17
Արտահայտվելու ազատություն, ներառյալ տեղեկատվության ազատություն.....17
Աշխատանքի իրավունք.....22
Շրջակա միջավայրի պաշտպանության իրավունք.....24
Բավարար կենսամակարդակի իրավունք.....24
Սոցիալական ապահովության իրավունք.....25
Առողջության իրավունք.....25
Կրթության իրավունք.....26
Իրավունքների պաշտպանության մեխանիզմներ 27
Ոստիկանություն 27
Դատարաններ.....28
Մարդու իրավունքների պաշտպան.....28
ՀՀ Փաստաբանների պալատ.....28
Մարդու իրավունքների եվրոպական դատարան.....29
Իրավապաշտպան հասարակական կազմակերպություններ 29
Տեղեկատվության, խոսքի և արտահայտման ազատություն 30
Ինտերնետ հասանելիությունն ու իրավիճակի փոփոխությունը...31
Սոցիալական ցանցերն ու խնդիրների բարձրաձայնման հնարավորություններ.....32
Քաղաքացի լրագրող.....33
Լրատվություն և ապատեղեկատվություն.....37
ՁԼՄ-ների հիմնական գործառույթները 37
ՁԼՄ-ները՝ որպես ներքին հարցերի լուծման գործիքներ.....37
Կասկածելի աղբյուրներն ու ապատեղեկատվությունը.....38
Քաղաքացիական ակտիվություն.....39
Ոչ բռնի պայքարի փիլիսոփայությունը.....39
Փոփոխության առանցքը 40
Խնդրի սահմանում 40
Նպատակի ձևակերպում 41
Թիմային աշխատանք 41
Դերակատարների քարտեզագրում 42
Ռեսուրսների քարտեզագրում.....42
Ուժերի վերլուծություն.....42
Շարժման ռազմավարություն 44

Ռազմավարություն և մարտավարություն 44
Գործողությունների տեսակներ 45
Սոցիալական ցանցերի արդյունավետ օգտագործում 45
Ծրագիր մեկ գործողություն կազմակերպելու համար..... 47
Ամփոփագիր..... 48
Համայնքային գործողություններ..... 49
Աշտարակ..... 49
Հիմնախնդիր 49
Գործողություն 49
Արդյունք..... 50
Մարտահրավերներ 51
Արտաշատ 51
Հիմնախնդիր 51
Գործողություն 52
Արդյունք..... 53
Մարտահրավերներ 53
Արմավիր 53
Հիմնախնդիր 53
Գործողություն 54
Արդյունք..... 55
Մարտահրավերներ 56
Գավառ 56
Հիմնախնդիր 56
Արդյունք..... 57
Մարտահրավերներ 61
Գորիս 62
Հիմնախնդիր 62
Գործողություն 62
Արդյունք..... 63
Մարտահրավերներ 64
Եղեգնաձոր..... 64
Հիմնախնդիր 64
Գործողություն 65
Արդյունք..... 65
Մարտահրավերներ 66
Իջևան 66
Հիմնախնդիր 66
Գործողություն 66
Արդյունք..... 67
Մարտահրավերներ 67
Կազմակերպության վերաբերյալ 68

Ներածություն

2014 թվականի օգոստոս - դեկտեմբեր ամիսներին Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը Հայաստանում Գերմանիայի Դաշնության դեսպանատան ֆինանսական աջակցությամբ իրականացրել է «Տեղական իրավապաշտպանության խթանում» ծրագիրը, որի շրջանակներում կազմակերպվել են դասընթացներ ութ մարզերի ութ քաղաքներում՝ Աշտարակ, Արմավիր, Արտաշատ, Գավառ, Գորիս, Եղեգնաձոր, Իջևան և Չարենցավան: Ծրագրի նպատակն էր նպաստելու տեղական մակարդակում իրավապաշտպանության խթանմանը՝ հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացման և մարզային երիտասարդների կարողությունների զարգացման միջոցով:

Իրազեկվածության մակարդակի բարձրացման արշավ կազմակերպելու գաղափարը պայմանավորված է այն հանգամանքով, որ իրավապաշտպանությունը և քաղաքացիական ակտիվությունը Հայաստանի Հանրապետության տարածքում հավասարապես չեն զարգացած՝ տեղական իրավապաշտպան կազմակերպությունների և անկախ լրատվամիջոցների բացակայության պատճառով: Այս առումով ծրագրի նպատակն էր համագործակցություն հաստատել տեղական հասարակական կազմակերպությունների, իրավաբանների, և լրագրողների հետ՝ իրավապաշտպանությանն առնչվող խնդիրների լուծման նպատակով: Ծրագիրը նաև հեռահար նպատակ ուներ բացահայտելու ակտիվ երիտասարդների և երիտասարդական խմբերի՝ համայնքային մակարդակում մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարական գործընթացներում նրանց մասնակցության խթանման և կայուն համագործակցության հաստատման նպատակով:

Ծրագրի շրջանակներում կազմակերպված դասընթացների արդյունքում մասնակիցների կողմից ներկայացվել են կարճաժամկետ ծրագրային առաջարկներ, որոնցից մրցութային կարգով ընտրվել և իրականացվել են յոթը:

Սույն ձեռնարկը կազմվել է ծրագրի շրջանակներում իրականացված «Իրավապաշտպանություն և քաղաքացիական ակտիվություն» դասընթացի նյութերի և մասնակիցների կողմից իրականացված կարճաժամկետ ծրագրերի արդյունքների հիման վրա:

Ձեռնարկը նախատեսված է երիտասարդների և երիտասարդական խմբերի համար և նպատակ ունի աջակցելու համայնքային խնդիրների լուծման ուղղությամբ համակարգային մոտեցման ձևավորմանը:

Համայնքային պատասխանատվություն

Մարդկային հասարակության գոյության ողջ ընթացքում կենտրոնացված կառավարման անարդյունավետության կամ այլ պատճառներով քաղաքացիները ֆորմալ կամ ոչ ֆորմալ միավորումներ են ձևավորել՝ համայնքին հուզող խնդիրների լուծման, հանրային կարիքների բավարարման նպատակով: Եթե ի սկզբանե միավորումները ստեղծվում էին աղքատության հիմնախնդրին անդրադառնալու համար և ուղղված էին ամենախոցելի խմբերի հիմնական կարիքների բավարարմանը, ապա աստիճանաբար դրանք ընդլայնեցին իրենց գործունեությունը՝ անդրադառնալով տարբեր իրավունքներին, կրթությանը, աշխատանքային պայմանների բարելավմանը, հավասարությանը, առողջությանը, մշակույթին և շրջակա միջավայրին:

Հասարակական ֆորմալ և ոչ ֆորմալ միավորումներ ստեղծելով քաղաքացիները պատասխանատվություն են ստանձնել ծառայելու իրենց համայնքին՝ կամավորական նախաձեռնությունների միջոցով: Ժամանակի ընթացքում ստանալով ռազմավարական ձևավորում և բնույթ՝ միավորումները սկսել են արձագանքել սոցիալական, քաղաքական և տնտեսական մարտահրավերներին: Նրանք դարձել են հանրային կարծիքի ներկայացման այլընտրանքային միջոց, որն իր շահույթ չհետապնդող բնույթի շնորհիվ ավելի վստահելի է համարվում:

Հասարակական կազմակերպությունների և ոչ ֆորմալ խմբերի դերն անգնահատելի է ոչ միայն ծառայությունների մատուցման, այլ նաև համայնքային համախմբման և քաղաքացիական մասնակցության առումով: Իհարկե հասարակական կազմակերպություններն ունեն որոշակի կախվածություն ֆինանսավորող կառույցների առաջնահերթություններից, որոնք երբեմն չեն բխում համայնքի իրական կարիքներից և չեն արտացոլում զարգացման առկա փուլն ու մարտահրավերները:

Համայնքային խնդիրները պահանջում են երկարաժամկետ նպատակային աշխատանք, ոչ թե կարճաժամկետ ծրագրեր, սակայն ֆինանսավորող կառույցներն ակնկալում են անհապաղ արդյունքներ և շոշափելի ու քանակական ձեռքբերումներ: Արդյունքում կազմակերպությունները ներկայացնում և իրականացնում են ծրագրեր, որոնք համապատասխանում են ֆինանսավորող կառույցների պահանջներին և ոչ թե բխում են հանրության կարիքներից և առաջնահերթություններից: Հասարակական կազմակերպությունների ֆինանսավորման սահմանափակումներն ու առանձնահատկությունները որոշակիորեն խոչընդոտում են այս միավորումների միանշանակ ընկալմանը, ինչն էլ իր հերթին

խոչընդոտում է նրանց գործունեության լիարժեք արդյունավետությանը: Ոչ միանշանակ ընկալումը կարող է ունենալ սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառներ: Օրինակ՝ նպատակաուղղված պետական հակաքարոզչությունն այն հասարակական կառույցների նկատմամբ, ովքեր քննադատում են իշխանության քաղաքականությունը: Անկախ այդ պատճառների էությունից, դրանք խոչընդոտում են հանրության կյանքի բարելավմանը և հասարակական կազմակերպությունների գործունեությանը: Հաշվի առնելով այս սահմանափակումները՝ կարևոր է ոչ կառավարական կառույցների ներուժի և ռեսուրսների ուղղորդումը համայնքների աջակցության այլընտրանքային միջոցների զարգացման ուղղությամբ: Մասնավորապես համայնքահեն կազմակերպությունները և կամավորական ակտիվությունը կարող են լուծել որոշ համայնքային խնդիրներ՝ համայնքային ռեսուրսների և կարողությունների մոբիլիզացման (համախմբման) միջոցով: Ներհամայնքային ռեսուրսների օգտագործումը չի բացառում դրամաշնորհատու կառույցների կողմից ֆինանսավորվող նախաձեռնությունները, այլ ընդհակառակը խթանում է դրանց զարգացումը ու կիրառումն ըստ համայնքային կարիքների և հնարավորությունների՝ համայնքի անդամների ակտիվ մասնակցությամբ:

Հանրության կյանքի բարելավման գերնպատակի իրականացման առումով կազմակերպությունները տարաբնույթ մոտեցում ունեն: Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը կարևորում է մարդու իրավունքների պաշտպանությունը՝ որպես յուրաքանչյուր քաղաքացու, հետևաբար նաև հանրության արժանապատիվ կյանքի երաշխիք:

Մարդու իրավունքների պաշտպանության առումով կարևոր է մարտահրավերների նկատմամբ համապարփակ և ռազմավարական մոտեցումը: Այդ պատճառով ՀՔԱ Վանաձորի գրասենյակը կարևորում է խնդիրների համատեղ լուծման մոտեցումը, որն իր մեջ ներառում է տարբեր ոլորտների մասնագետների համագործակցություն: Իրավունքների պաշտպանության կարևոր երեք փուլերն են

1. Սեփական իրավագիտակցության, մարդու իրավունքների վերաբերյալ գիտելիքների ամրապնդում
2. Մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ արժանահավատ և հիմնավոր տեղեկատվության ստացում և տարածում՝ ընդհանուր իրազեկում
3. Քաղաքացիների համախմբում, քաղաքացիական գործողությունների պլանավորում և իրականացում, քաղաքացիական վերահսկողություն

Մարդու և քաղաքացու իրավունքներ

Անի Չատինյան

Լեհաստանի Հելսինկյան Կոմիտեի համահիմնադիր, իրավապաշտպան Մարեկ Նովիցկին պնդում է, որ ժողովրդավարական հասարակության մեջ մեծամասնության իշխանության սահմանները որոշվում են մարդու իրավունքներով և ազատություններով:[1]

Մարդու իրավունքների կարևորագույն հասկացություններից է **իրավունքի պետություն (իրավական պետություն) հասկացությունը:** Իրավական է այն պետությունը, որտեղ գործում են առանձին անհատների և իշխանության համար նախատեսված հստակ, կայուն և բոլորին հայտնի խաղի կանոններ: Իրավական պետությունում քաղաքացին շատ մեծ հավանականությամբ կարող է կանխատեսել, թե իշխանություններն ինչպես կարձագանքեն նրա այս կամ այն վարքագծին, քանի որ նման պետությունում գերակայում է ոչ թե պետական պաշտոնյաների կամ իշխանավորների կամայականությունը, այլ՝ հստակ և թափանցիկ իրավունքը:

Պետք է փաստել, որ իրավական պետությունը միշտ չէ, որ ժողովրդավարական է, իսկ ժողովրդավարական պետությունը՝ իրավական:

Մարդու իրավունքներն ու ազատությունները դրսևորվում են միմիայն **պետության հետ անհատի ունեցած փոխհարաբերություններում:** Իրավունքների նման դրսևորումը կոչվում է «ուղղահայաց»: Ընտանեկան կյանքից, սիրուց, ընկերությունից և բարիդրացիական հարաբերություններից բխում են մի շարք իրավունքներ և պարտականություններ, որոնք, սակայն, մարդու իրավունքների շրջանակներում ընդգրկված չեն:

Մարդու իրավունքները ոչ թե **կոլեկտիվ (խմբային)** են, այլ՝ **անհատական**, և դրանց սուբյեկտը հանդիսանում է առանձին անհատը: Այսպիսով, մարդու իրավունքները ներառում են ոչ թե ազգային փոքրամասնությունների իրավունքները, որոնք դիտարկվում են քաղաքականության շրջանակներում (օրինակ, նման խմբային իրավունք է ինքնավարության իրավունքը), այլ՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքները, ինչպես նաև՝ ոչ թե հաշմանդամների խմբի իրավունքները, այլ՝ այդ խմբի յուրաքանչյուր առանձին անհատի իրավունքները:

«Մարդու իրավունքները» բաժանվում են երկու հիմնական խմբի՝ **նյութական և ընթացակարգային**: Նյութական իրավունքները մարդուն վերապահված կոնկրետ իրավունքներն ու ազատություններն

[1] What are Human Rights?, Marek Nowicki, http://www.hfhr.pl/wp-content/uploads/2011/06/marek_nowicki_what_are_human-rights.pdf

են, այն է՝ խոսքի ազատությունը, խղճի ազատությունը, դավանանքի ազատությունը, բնակության վայրի ընտրության ազատությունը, կրթության իրավունքը և այլն: Ընթացակարգային իրավունքներն իրենցից ներկայացնում են անհատին հասանելի գործելու եղանակները և դրանց առնչվող ինստիտուտները, որոնք նրան հնարավորություն են տալիս հետամուտ լինել իշխանությունների կողմից իր ազատությունների պահպանմանը և իրավունքների իրացմանը:

Երբեմն նշված տարբերակումը հստակ չէ. օրինակ՝ դատաքննության իրավունքը որոշ իրավիճակներում կարող է համարվել նյութական (երբ դիմում ենք դատարան՝ որպես մեկ այլ անձի հետ մեր վեճը լուծող ատյան), իսկ որոշ դեպքերում՝ ընթացակարգային (երբ բողոք ենք ներկայացնում դատարան մեր իրավունքները խախտած որևէ հաստատության դեմ):

Նյութական իրավունքները ներառում են՝ **իրավունքներ և ազատություններ**: **Իրավունքը** (դրական իրավունք) հանդիսանում է իշխանավորների՝ յուրաքանչյուր անհատի օգտին ուղղված լուրջ միջոցներ ձեռնարկելու պարտավորությունը:

Ազատությունը (բացասական իրավունք) ենթադրում է անհատների կյանքի որոշ ոլորտներին միջամտելու հարցում իշխանությունների վրա դրված արգելքը: Խոսքի ազատությունը, կրոնի ազատությունը և այլ ազատություններ պետական իշխանություններին արգելում են միջամտել մարդկային գործունեության նշված ոլորտներին: Այսինքն, եթե անձն ունի որևէ իրավունք, ապա իշխանությունները պարտավոր են ինչ-որ բան անել այդ իրավունքի ապահովման համար, այսինքն՝ կատարել ակտիվ գործողություն, իսկ եթե անձին վերապահված է որևէ ազատություն, ապա պետությունը պարտավոր է ձեռնպահ մնալ որևէ գործողությունից:

Որոշ իրավունքներ **անօտարելի** են: Նման իրավունքները մարդուն վերապահված այնպիսի իրավունքներն են, որոնցից նա չի կարող հրաժարվել: Որևէ անձի կողմից ստորագրված փաստաթուղթն առ այն, որ նա հրաժարվում է իր անձի ազատությունից և որևէ մեկի մոտ ստրկության է անցնում, չի կարող ունենալ որևէ իրավական հետևանք և ի սկզբանե իմաստազուրկ է: Սակայն մենք կարող ենք արդյունավետորեն տնօրինել մեր գույքը և սահմանափակել սեփականության մեր իրավունքը, քանի որ սեփականության իրավունքն անօտարելի իրավունք չի հանդիսանում:

Քանի որ մարդու իրավունքների և ազատությունների հետ կապված բոլոր հարցերը վերաբերում են անհատի և իշխանությունների փոխհարաբերություններին, ապա հարկավոր է ընդգծել, որ նման փոխհարաբերությունների բնույթի նկատմամբ գոյություն ունի երեք սկզբունքորեն տարբեր մոտեցում.

Առաջին մոտեցման համաձայն՝ առաջնային է համարվում իշխանությունը, որի բարեհաճությամբ և բարությամբ մարդկանց հատկացվում են որոշ իրավունքներ: Այսպիսով, մարդիկ ունեն այնքան

իրավունքներ, որքան նրանց կտրամադրեն իշխանությունները: Այս մոտեցումն ամրագրված է բոլոր կոմունիստական երկրների սահմանադրություններում, ինչպես նաև եվրոպական որոշ պետությունների՝ տասնիններորդ դարի սահմանադրություններում:

Երկրորդ մոտեցման հիմքում ընկած է հասարակական պայմանագրի մոդելը. այս պարագայում իշխանությունները պայմանագիր են կնքում որպես անհատների ամբողջություն (այլ ոչ թե որպես մարքսիստական հասարակություն, որը, հանդիսանալով «նոր որակի հասարակություն», կարող է ունենալ իր սեփական նպատակները՝ առանց հաշվի առնելու հասարակության առանձին անդամների կամքը և շահերը) ընկալվող ժողովրդի հետ: Պետության հպատակ քաղաքացիները համաձայնվում են կատարել որոշակի պարտականություններ հօգուտ իշխանավորների (օրինակ՝ վճարել հարկեր), իսկ իշխանություններն իրենց հերթին պարտավորվում են որոշակի քայլեր ձեռնարկել հօգուտ ժողովրդի (իրացնել նրանց իրավունքները) և զերծ մնալ նրանց կյանքի որոշ ոլորտներին միջամտելուց (այսինքն՝ ճանաչել նրանց ազատությունները): Նման պայմանագիրը, որն այս կամ այն չափով շահավետ է յուրաքանչյուր կողմի համար և լրացված է պետական ապարատի կառուցվածքի նկարագրությամբ, հաճախ կոչվում է «սահմանադրություն»:

Երրորդ մոտեցումը բնորոշ է ամերիկյան մտածելակերպին: Մարդ արարածին հատկանշական բնական իրավունքներն ու ազատություններն ունեցող անձինք իրենց կյանքը բարելավելու և ավելի հարմարավետ դարձնելու համար որոշում են պետություն կազմել և իշխանություն նշանակել: Պետության գործունեությունն ապահովելու նպատակով նրանք ինքնակամ սահմանափակում են որոշ իրավունքներ և ազատություններ՝ թողնելով դրանք պետության հայեցողությանը, օրինակ՝ սահմանափակում են իրենց սեփականության իրավունքը՝ համաձայնվելով վճարել հարկեր կամ սահմանափակում են իրենց ազատությունը՝ պարտավորվելով ըստ անհրաժեշտության ծառայել բանակում:

Այս մոտեցումը հիմնովին տարբերվում է առաջինից: Եթե առաջին դեպքում ժողովուրդն օգտվում է այնքան իրավունքներից, որքան նրան տրամադրում են իշխանությունները, ապա երրորդ դեպքում ժողովուրդն է իրավունքներ վերապահում իշխանություններին: Մտածելակերպի նման տարբերություններն ունեն լուրջ գործնական հետևանքներ: Իրավական նորմ ընտրելու և այն համապատասխանաբար կիրառելու անհրաժեշտության պարագայում առաջնորդվելով անհատի և իշխանությունների փոխհարաբերությունների դիտարկման նկատմամբ առաջին և երրորդ մոտեցումներով՝ կստանանք տարբեր լուծումներ, ինչը նշանակում է, որ անգամ նույն դրույթների պարագայում հասարակական իրականությունը կարող է ձևավորվել տարբեր կերպ: Երրորդ մոտեցումը, որի համաձայն՝ **իշխանություններին թույլատրվում է միայն այն, ինչ թույլատրելի է օրենքով, իսկ ժողովրդին՝ այն ամենը, ինչն օրենքով արգելված չէ**, հանդիսանում է մարդու

իրավունքների հայեցակարգի հիմքերից մեկը: Այդուհանդերձ, հարկավոր է հիշել, որ մենք դիտարկում ենք միայն «անհատի և իշխանությունների» միջև հաստատվող փոխհարաբերությունների խնդիրը, և որ այն պնդումը, որի համաձայն անհատին թույլատրվում է օրենքով չարգելված ամեն ինչ, սահմանափակում է միայն մեր կյանքի տարբեր ոլորտներին պետության հարկադրական միջամտության հնարավորությունը՝ առանց որևէ կերպ նվազեցնելու հարազատների, հարևանների կամ պարզապես այլ մարդկանց նկատմամբ մեր ունեցած բարոյական պարտավորությունները:

Մարդու իրավունքների հայեցակարգի հիմնական հասկացությունն է անօտարելի **մարդկային արժանապատվությունը:** Մարդկային արժանապատվությունը կապված է մարդ լինելու բուն էության հետ՝ բխելով տվյալ էակի՝ մարդ արարած լինելու փաստից, այսինքն՝ մարդկային արժանապատվությունը բնորոշ է թե՛ մանուկին, ով իր կյանքում դեռևս չի գործել ո՛չ լավ, ո՛չ էլ վատ արարք, և թե՛ ամենավատ հանցագործին:

Այսպիսով, մարդու իրավունքները չեն երաշխավորում, որ մենք կլինենք սիրված, երջանիկ և հաջողակ, ո՛չ էլ արդարացիություն կամ նվազագույն բարեկեցություն, այլ միայն մեզ պաշտպանում են նվաստացումից, մեր արժանապատվության նկատմամբ ոտնձգություններից այն էլ միայն մեկ, սակայն հնարավոր ամենահզոր խախտողից՝ պետական իշխանություններից, որոնք ժողովրդավարության պայմաններում արտահայտում են մեծամասնության կամքը:

Յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով: Մարդու իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով:

ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատություններն են[2].

Հավասարության իրավունք

Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային

[2] ՀՀ Սահմանադրություն, http://www.arlis.am/documentview.aspx?docID=1

վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

ՀՀ Սահմանադրության 14.1 կետը սահմանում է հավասարության դրույթը, այս դրույթը պետք է անվերապահորեն գործի պետական բոլոր մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից: **Ոչ ոք չպետք է ենթարկվի խտրականության կամ տարբերակված մոտեցման:** ՀՀ Սահմանադրության վերը նշված դրույթին լրացնում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածով ամրագրված խտրականության արգելքը:

Չնայած սահմանադրական և միջազգային երաշխիքներին՝ Հայաստանի Հանրապետությունը դեռևս չի ընդունել խտրականությունն արգելող առանձին օրենք, որն իրավական մեխանիզմներ կստեղծեր խտրականության կանխարգելման և խտրականությունից տուժածների պաշտպանության համար: Հայաստանի Հանրապետությունում խտրականության և անհանդուրժողականության դեպքերը բազմաթիվ են հատկապես տարբեր կրոնական կազմակերպություններին հարող անձանց և սեռական փոքրամասնությունների նկատմամբ: Այս անհանդուրժողականությունը ոչ միայն չի կանխվում, այլ նույնիսկ խրախուսվում է պետական մարմինների կողմից՝ խախտելով ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային նորմերով սահմանված այլ ազատություններ և իրավունքներ ևս:

Կյանքի իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի: Կյանքի իրավունքը բացարձակ իրավունք չէ, այս իրավունքը, չնայած իր կարևորության բացառիկ դեպքերում կարող է սահմանափակվել՝ անհրաժեշտ պաշտպանություն և պատերազմական վիճակներում և այլն: Կյանքի իրավունքի ապահովման գործընթացում պետությունը ունի 2 պարտավորություն **նեգատիվ** և **պոզիտիվ**:

Պետության նեգատիվ պարտավորությունը սահմանում է, որ պետությունն՝ ի դեմս պաշտոնատար անձանց, պետք է ձեռնպահ մնա այնպիսի գործողություններ կատարելուց, որի արդյունքում կարող է խախտվել անձի կյանքի իրավունքը:

Պետության պոզիտիվ պարտավորությունը ենթադրում է, որ պաշտոնատար անձինք և պետական մարմինները պետք է որոշակի պոզիտիվ քայլեր ձեռնարկեն անձանց կյանքը և առողջությունը պաշտպանելու ուղղությամբ՝ անկախ այն հանգամանքից, թե ում կողմից է եղել անձի կյանքի կամ առողջության նկատմամբ ոտնձգություն: Պոզիտիվ պարտավորության շրջանակների մեջ է

մտնում նաև անձի մահվան դեպքում հանրային մեղադրանքի ուժով քրեական գործ հարուցելու և քննություն կատարելու պահանջը:

Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք

Մարդու իրավունքների համակարգում առաջնային կարևորություն և նշանակություն ունեն անձնական իրավունքները, այդ թվում՝ անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը: **Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք:** Մարդուն կարելի է ազատությունից զրկել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածը հստակորեն նախատեսում է այն կոնկրետ պայմանները, որոնց առկայության դեպքում է միայն հնարավոր սահմանափակել անձի՝ անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը (այն է՝ անձն իրավասու դատարանի կողմից դատապարտվել է ազատազրկման՝ հանցագործություն կատարելու համար, անձը չի կատարել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած կարգադրությունը): Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում քիչ չեն դեպքերը, երբ անձը զրկվում է ազատության իրավունքից՝ հիշյալ հոդվածի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, հաճախ անձինք ոստիկանություն են տեղափոխվում առանց օրինական հիմքերի և քրեադատավարական նորմերի բազմաթիվ խախտումներով: Անձին բերման ենթարկելը կամ ձերբակալելը ենթադրում է նրա իրավունքների և ազատությունների սահմանափակում:

Իր ազատությունների սահմանափակման դեպքում անձն իրավունք ունի՝

1) սահմանափակման պահից իմանալու իր ազատության սահմանափակման պատճառները, հիմքերը, իր ազատությունը սահմանափակող ոստիկանության ծառայողի պաշտոնը, կոչումը, ազգանունը.
2) ստանալու իրավաբանական օգնություն.
3) բացատրություններ տալու փաստաբանի ներկայությամբ կամ հրաժարվելու բացատրություններ տալուց՝ լռելու իրավունք
4) ծանոթանալու իր իրավունքների ու ազատությունների սահմանափակմանն անմիջականորեն առնչվող փաստաթղթերին կամ նյութերին.
5) պահանջելու, որպեսզի ոստիկանություն բերելու պահից սկսած՝ երեք ժամվա ընթացքում իր գտնվելու վայրի մասին տեղեկացվի իր կողմից ընտրված անձին.
6) անհրաժեշտության դեպքում ստանալու բժշկական օգնություն.
7) պահանջելու օրենքով նախատեսված միջոցներ ձեռնարկել իր ազատության սահմանափակման կապակցությամբ իր կամ ընտանիքի անդամների կյանքին, առողջությանը, գույքին սպառնացող վտանգը վերացնելու, ինչպես նաև իր տիրապետման տակ գտնվող՝ առանց հսկողության մնացած գույքը պահպանելու նպատակով.
8) ծանոթանալու իր ազատության սահմանափակման օրինականությունը և հիմնավորվածությունը բողոքարկելու կարգին, ոստիկանության գործողություններն ու որոշումները բողոքարկելու վերադասության կարգով կամ դատախազին կամ դատարան.
9) ոստիկանություն բերվելիս՝ իր պահանջով ստանալու իրավունքների մասին իր համար հասկանալի լեզվով գրավոր ծանուցում.

10) պահանջելու, որպեսզի իրեն թույլ տան օգտվելու իր իրավունքներից՝ դրա մասին գրավոր դիմելով իր ազատությունը սահմանափակած ոստիկանության ծառայողին:

Ազատությունից զրկելը (բերման ենթարկելուց հետո ձերբակալումը) չի կարող տևել արգելանքի վերցնելու պահից 72 ժամից ավելի: Նշված ժամկետում, եթե համապատասխան հիմքեր չկան անձին մեղադրանք առաջադրելու և խափանման միջոց ընտրելու, անձը անհապաղ պետք է ազատ արձակվի արգելանքից:

Մեղադրանք առաջադրելուց հետո, պետք է լուծվի խափանման միջոց կիրառելու հարցը, ազատության սահմանափակման հետ կապված խափանման միջոց՝ կալանավորման դեպքում վարույթն իրականացնող մարմնի միջնորդության հիման վրա դատարանը պետք է կայացնի պատճառաբանված և հիմնավորված որոշում: Անձը կարող է կալանավորվել միայն դատարանի որոշման հիման վրա:

Խոշտանգումներից անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք: Մարդուն չի կարելի առանց իր համաձայնության ենթարկել գիտական, բժշկական և այլ փորձերի:

Ի տարբերություն կյանքի իրավունքի, **խոշտանգումներից զերծ մնալու իրավունքը բացարձակ իրավունք է**, այն ոչ մի դեպքում, ոչ մի պարագայում կամ հիմնավորմամբ չի կարող խախտվել կամ սահմանափակվել: Խոշտանգումներից, դաժան և նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը իր մեջ ներառում է մի քանի ասպեկտներ: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայից բխում է, որ արարքը որպես խոշտանգում որակելու համար պարտադիր է հետևյալ 3 տարրերի առկայությունը.

- ☑ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան տանջանք պատճառելը.
- ☑ դիտավորյալ ցավ պատճառելը.
- ☑ կոնկրետ նպատակ հետապնդելը:

Այս առումով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում խոշտանգման սահմանումը չի համապատասխանում միջազգային նորմերին, ինչը նշանակում է, որ խոշտանգումներից զերծ մնալու բացարձակ իրավունքն արդյունավետորեն չի պաշտպանվում: Պետության վերահսկողության ներքո գտնվող գրեթե բոլոր հաստատություններում՝ ոստիկանություն, զինված ուժեր, քրեակատարողական հիմնարկներ և այլն, արձանագրվում են խոշտանգման և անմարդկային վերաբերմունքի մեծաթիվ դեպքեր,

որոնք սակայն հիմնականում չեն բացահայտվում և մեղավորները պատասխանատվության չեն ենթարկվում: Խոշտանգումների բացահայտմանը մեծապես խոչընդոտում է այն, որ շատ դեպքերում տուժածները վախենում են բարձրաձայնել և իրենց իրավունքի պաշտպանության նպատակով գործողություններ ձեռնարկել, մինչդեռ նմանատիպ խախտումների հանրայնացումը կարող է զսպող ուժ հանդիսանալ խախտումն իրականացնող մարմնի նկատմամբ և խթանել գործի օբյեկտիվ քննությունը:

Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը:

Այդ իրավունքը ենթադրում է, որ **առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով**: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով:

Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր մասին ոչ հավաստի տեղեկությունների շտկման և իր մասին ապօրինի ձեռք բերված տեղեկությունների վերացման իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ:

Բնակարանի անձեռնմխելիության իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Արգելվում է մարդու կամքին հակառակ մուտք գործել նրա բնակարան՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Բնակարանը կարող է խուզարկվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի որոշմամբ: Այլ դեպքերում բնակարանում կատարվող խուզարկությունը համարվում է խախտում, որը զուգորդվում է անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի խախտման հետ:

Ի դեպ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք նախադեպային որոշումների տրամաբանությամբ բնակարան հասկացությունը իր մեջ ներառում է նաև այն վայրը որտեղ անձը

առավելապես գտնվում է՝ աշխատասենյակ, ավտոմեքենա, արհեստանոց և այլն: Ապօրինի խուզարկությունը հաճախ կիրառվում է որպես քաղաքացու նկատմամբ ճնշում գործադրելու միջոց և այս առումով կարևոր է համապատասխան ընթացակարգերի մասին պատշաճ իրազեկվածությունը:[3]

Բնակարանում խուզարկություն կարող է կատարվել, երբ վարույթն իրականացնող մարմինը, բավարար հիմքեր ունի ենթադրելու, որ անձի մոտ հանցագործության գործիքներ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաներ ու արժեքներ, ինչպես նաև այլ առարկաներ և փաստաթղթեր են պահվում, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար, խուզարկություն է կատարում դրանք գտնելու և վերցնելու համար:

Խուզարկությանը մասնակիցներն են.
1. Խուզարկությունը կատարվում է ընթերակաների մասնակցությամբ:
2.Անհրաժեշտության դեպքում խուզարկությանը մասնակցում են թարգմանիչ և մասնագետ:
3. Խուզարկություն կատարելիս պետք է ապահովվի այն անձի և նրա ընտանիքի չափահաս անդամի ներկայությունը, որոնց բնակարանում կատարվում է խուզարկությունը:
4. Անձն իրավունք ունի խուզարկության կատարման ժամանակ հրավիրել իր փաստաբանին, ով իրավունք ունի մասնակցելու վարույթն իրականացնող մարմնի կողմից իրականացվող բոլոր գործողություններին, հայտարարություններ անել, որոնք պետք է ներառվեն խուզարկության արձանագրության մեջ:

Խուզարկություն կատարելուց առաջ քննիչը պարտավոր է անձին, որի մոտ կատարվում է խուզարկություն, ծանոթացնել որոշմանը: Այդ մասին նրանից վերցվում է ստորագրություն:

Խուզարկության ավարտին վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կազմել համապատասխան արձանագրություն, որտեղ նշվում է քննչական գործողության կատարման տեղը, ժամանակը, հանգամանքները, արդյոք կամովին են հանձնվել որոնվող առարկաները և անձինք, խուզարկություն կատարող անձի անունը, ազգանունը, պաշտոնը, ընթերակաների անունները, ազգանունները և հասցեները, ինչպես նաև քննչական գործողության այլ մասնակիցների անունները, ազգանունները, պաշտոնները և դատավարական կարգավիճակը, արձանագրությունում ներառվում են նաև մասնակիցների դիտողությունները:

Խուզարկության արձանագրության պատճենը պարտադիր, ստորագրությամբ հանձնվում է այն անձին, ում մոտ կատարվել է խուզարկությունը, կամ նրա ընտանիքի չափահաս անդամներին:

[3] Ոստիկան - քաղաքացի հարաբերություններ, ՀՔԱ Վանաձորի գրասենյակ, https://www.youtube.com/watch?v=jcukDe1chys

Խղճի, մտքի և կրոնի ազատություն

Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը:

ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված մտքի, խղճի և կրոնի ազատության մասին դրույթ իր մեջ պարունակում է նաև այդ իրավունքը հարգելու պարտադիր պայման:

Այնուհանդերձ, Հայաստանը միայն 2014 թվականին է դադարեցրել կրոնական համոզմունքների պատճառով զինվորական ծառայությունից խուսափող անձանց քրեական հետապնդումը, իսկ տարբեր կրոնական կազմակերպություններին հարող անձանց նկատմամբ խտրականությունը շարունակվում է աշխատանքային, կրթական և այլ հասարակական հարաբերություններում:

Արտահայտվելու ազատություն, ներառյալ տեղեկատվության ազատություն

Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվել իր կարծիքից կամ փոխել այն:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է ՀՀ Սահմանադրությամբ և կարգավորվում է «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով:

Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները անձանց տեղեկատվություն ստանալու հարցումներին պարտավոր են պատասխանել այն ստանալու պահից 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության, որը կարող է տրամադրվել 30 օրյա ժամկետում:

Քաղաքացիներին տեղեկատվության տրամադրումը կարող է մերժվել, եթե պահանջվող տեղեկատվությունը պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք, խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ և այլն:

Տեղեկատվության հարցումները կարելի է ներկայացնել հետևյալ ձևաչափով.

_____
Հասցեատիրոջ անուն ազգանուն

_____
Կառույց

_____
Հասցե

Դիմող՝

_____
Անուն, ազգանուն

_____
Հասցե

հեռ. _____

Տեղեկատվություն ստանալու հարցում

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի և ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալ հարցերի վերաբերյալ.

- ✓ _____
- ✓ _____
- ✓ _____
- ✓ _____

Համաձայն ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11):

Դիմող՝ _____

_____թ.

Հավաքների և միավորման ազատություն

Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք: Այս իրավունքն իր մեջ ներառում է նաև այլոց հետ միավորվելու ազատության իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը: Հավաքների ազատության իրավունքը երաշխավորվում է Հավաքների ազատության մասին ՀՀ օրենքով և միջազգային իրավական ակտերով[4]:

ՀՀ հավաքների ազատության մասին օրենքի իմաստով հավաք է համարվում երկու կամ ավելի անձանց խաղաղ և առանց զենքի ժամանակավոր ներկայությունը որևէ վայրում՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ ընդհանուր կարծիք ձևավորելու կամ արտահայտելու մտադրությամբ:

Ոչ ոք իրավունք չունի պարտադրելու անձին մասնակցել որևէ հավաքի կամ խոչընդոտել նրա մասնակցությունը որևէ հավաքի: Հավաքի կազմակերպիչը հավաք անցկացնելու համար գրավոր իրազեկում է լիազոր մարմնին, բացառությամբ մինչև 100 մասնակից ունեցող, շտապ և ինքնաբուխ հավաքների: Համայնքի ղեկավարի և ոստիկանության գրավոր իրազեկումն իրականացվում է ոչ ուշ, քան հավաքի անցկացման օրվանից 7 օր առաջ:

Իրազեկման մեջ որպես պարտադիր պայման, պետք է նշվի.
1) հավաքի վայրը,
2) հավաքի սկզբի և ավարտի մոտավոր ժամանակը,
3) հավաքի նպատակը,
4) մասնակիցների սպասվող թիվը,
5) հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները (պաստառներ, ջահեր, բարձրախոսներ և այլն),
6) կարգադրիչների նախատեսվող թիվը,
7) երթի դեպքում՝ երթի ուղին և ժամանակացույցը,
8) կազմակերպիչների անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները (կցելով փաստաթղթի պատճենը), հեռախոսահամարները, փոստային և էլեկտրոնային հասցեները, իսկ եթե կազմակերպիչն ու հավաքի ղեկավարը տարբեր անձինք են՝ նաև հավաքի ղեկավարի անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները, փոստային հասցեն և առկայության դեպքում՝ հեռախոսահամարներն ու էլեկտրոնային հասցեն:

Ոստիկանությունը հավաքի վերաբերյալ պատշաճ իրազեկումը ստանալուց հետո պարտավոր է տվյալ օրը տվյալ վայրում ունենալ համապատասխան ներկայացուցիչներ, որոնք պարտավոր են ապահովել հավաքի բնականոն ընթացքը: Այնուամենայնիվ վերջին տարիներին աճող հավաքների թվին զուգահեռ աճում են դեպքերը, երբ հավաքների անցկացման վայրում գտնվող ոստիկանության աշխատակիցները հավաքի մասնակիցների անվտանգության և

[4] Խաղաղ հավաքների ազատության իրավունք. տեղեկատվական թերթիկ, http://hcav.am/wp-content/uploads/2014/11/ARM-Freedom-of-Assembly-best-practices-factsheet.pdf

հավաքի բնականոն ընթացքի ապահովման փոխարեն իրենց գործողություններով փորձում են խոչընդոտել հավաքի ընթացքը, սահմանափակում կամ խախտում են մասնակիցների իրավունքներն ու ազատությունները, այդ թվում՝ ազատ տեղաշարժման իրավունքը, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը, վատ վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը, արտահայտվելու ազատության իրավունքը և այլն[5]:

Հավաքների անցկացումը արգելվում է, եթե
1) հավաքի նպատակը սահմանադրական կարգի բռնի տապալումը, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելը, բռնություն կամ պատերազմ քարոզելն է.
2) անձը, Հավաքների ազատության մասին ՀՀ օրենքի համաձայն, չունի հավաք կազմակերպելու իրավունք.
3) հավաքն անցկացվելու է Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության նստավայրերից, դատարաններից կամ քրեակատարողական հիմնարկներից այնպիսի հեռավորության վրա, որի դեպքում այն սպառնում է դրանց բնականոն գործունեությանը.
4) հավաքն անցկացվելու է «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ից կամ գազի ստորգետնյա պահեստարաններից կամ դրանց սպասարկման կառույցներից կամ «Օրբիտա 2» վերգետնյա արբանյակային կայանից այնպիսի հեռավորության վրա, որը սպառնում է դրանց անվտանգությանը:

Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք: Սա նշանակում է նաև, որ պետությունը չի կարող անհարկի միջամտել միավորումների գործունեության մեջ:

Միավորումների ազատության սահմանափակմանն ուղղված ցանկացած նախաձեռնություն սպառնալիք է երկրում բազմակարծության և ժողովրդավարության իրականացման համար:

Ընտրական իրավունք

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն իրավունք ունեն մասնակցելու պետական և տեղական կառավարմանը անմիջականորեն կամ իրենց կողմից ընտրված ներկայացուցիչների միջոցով: Հայաստանի Հանրապետությունում ընտրելու իրավունք ունի տասնութ տարին լրացած անձը: Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների (բացառությամբ Երևան քաղաքի քաղաքապետի) ընտրություններն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

[5] Իրավապաշտպանների վիճակը Հայաստանում 2013 թ., ՀՔԱ Վանաձորի գրասենյակ, http://hcav.am/wp-content/uploads/2014/09/HRD-Arm-Final.pdf

Ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները:

Ընտրական իրավունքը կարգավորվում է ՀՀ Ընտրական օրենսգրքով:[6]

Բացի ընտրելու և ընտրվելու իրավունքից, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները կարող են նաև քաղաքացիական վերահսկողություն իրականացնել ընտրական գործընթացների նկատմամբ՝ դիտորդի կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի կարգավիճակով:

Ընտրությունների նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը նպատակ ունի՝

- ☑ Օրենքով սահմանված միջոցներով կանխել ընտրական իրավունքի խախտումները
- ☑ Արձանագրել և հավաքագրել ընտրական իրավունքի խախտումները
- ☑ Պաշտպանել և վերականգնել ընտրական իրավունքները
- ☑ Մշակել և ներկայացնել ընտրական գործընթացի բարելավմանն ուղղված առաջարկություններ

Հայաստանի Հանրապետության չափահաս քաղաքացիները կարող են դիտորդական առաքելություն իրականացնել հասարակական այն կազմակերպությունների կազմում, որոնց կանոնադրական խնդիրները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին:

Օրենքով սահմանված կարգով հավատարմագրված դիտորդն իրավունք ունի՝

1) ներկա լինելու ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում:
2) կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով հետևելու քվեաթերթիկների տպագրման, փոխադրման, պահպանման և քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին.
3) անարգել ծանոթանալու քվեաթերթիկների նմուշներին, ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու տվյալ ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, ընտրական հանձնաժողովների որոշումներին, նիստերի արձանագրություններին, դատարանի համապատասխան վճիռներին, լիազոր մարմնի՝ ընտրողին տրամադրած համապատասխան տեղեկանքին, ստանալու դրանց պատճենները կամ դրանցից քաղվածքներ (բացառությամբ ընտրողների ստորագրած ցուցակների), քվեարկության արդյունքների վերահաշվարկի ժամանակ ինքնուրույն կատարելու քաղվածքներ ընտրողների ստորագրած ցուցակներից.
4) ազատ տեղաշարժվելու քվեարկության սենյակում՝ քվեաթերթիկների ու քվեատուփի դիտարկման համար.
5) օգտվելու սույն օրենքով նախատեսված այլ իրավունքներից:

[6] ՀՀ Ընտրական օրենսգիրք, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=90888

Սեփականության իրավունք

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում:

Հարկ է նշել, որ հանրային սեփականությունը գերակայում է մասնավոր սեփականության նկատմամբ: Ինչը նշանակում է, որ եթե հանրային բացառիկ գերակա շահից ելնելով անհրաժեշտ է մասնավոր սեփականությունը, ապա այն կարող է օտարվել՝ օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ:

Համաձայն «Հասարակության եվ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի[1] 4-րդ հոդվածի երկրորդ մասի՝ գերակա հանրային շահը կարող է հետապնդել հետևյալ նպատակները՝

ա) պետության պաշտպանության, պետության ու հասարակության անվտանգության ապահովումը.
բ) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման ապահովումը.
գ) միջազգային և հանրապետական նշանակության պատմության և մշակութային արժեքների կամ հուշարձանների, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման կամ պահպանության ապահովումը.
դ) շրջակա միջավայրի պահպանության ապահովումը.
ե) կրթության, առողջության, սպորտի, ինչպես նաև գիտության կամ մշակույթի զարգացման ապահովումը.
զ) էներգետիկայի, հեռահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, ջերմամատակարարման, քաղաքաշինական, ընդերքի հետախուզման, ընդերքօգտագործման, տրանսպորտի, հաղորդակցության ուղիների կամ բնակավայրերի ենթակառուցվածքների զարգացման բնագավառում համապետական կամ համայնքային կամ միջհամայնքային կարևոր նշանակություն ունեցող ծրագրերի իրականացման ապահովումը.
է) անձանց կյանքի, առողջության կամ սեփականության պաշտպանությունը.
ը) արտակարգ իրավիճակների կանխումը, արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցումը, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացումը:

Այնուամենայնիվ, հանրային գերակա շահի ճանաչման ՀՀ Կառավարության բազմաթիվ որոշումներ վիճարկվել են հանրության և մասնավոր անձանց կողմից, թե նպատակահարմարության և թե համարժեք փոխհատուցման տեսանկյունից:

Աշխատանքի իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն: Յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և

օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, ինչպես նաև անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք:

Ոչ ոք չպետք է պահվի ստրկության մեջ կամ անազատ վիճակում: **Ոչ ոք չպետք է պարտադրվի կատարելու պարտադիր կամ հարկադիր աշխատանք: Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելումը բացարձակ իրավունք է**, այն ինչպես և խոշտանգումներից զերծ մնալու իրավունքը ոչ մի դեպքում և պայմանով չի կարող սահմանափկման ենթարկվել:

Աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական և աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք, որի իրականացման կարգը և սահմանափակումները սահմանվում են օրենքով: Աշխատանքային օրենսդրությունը հիմնվում է աշխատանքի ազատության, հարկադիր աշխատանքի և աշխատողների նկատմամբ բռնությունների արգելման, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարության, խտրականության բացառման, աշխատանքի արդարացի պայմանների իրավունքի ապահովման, աշխատողների իրավունքների և հնարավորությունների հավասարությունը, աշխատանքի արդարացի վարձատրության, գործատուների և աշխատողների՝ աշխատանքային իրավունքների և շահերի պաշտպանության համար ազատորեն միավորվելու՝ արհեստակցական միություններ ստեղծելու իրավունքի ապահովման,աշխատանքային հարաբերությունների կայունության. կոլեկտիվ բանակցությունների ազատության, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի կողմերի ըստ իրենց պարտականությունների պատասխանատվության սկզբունքների վրա:

Աշխատանքային օրենսգիրքը սահմանում է, որ աշխատանքային իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:

Աշխատանքային իրավունքների պաշտպանության առումով արհեստակցական միություններն անգնահատելի դեր են ունեցել ողջ աշխարհում, սակայն Հայաստանի Հանրապետությունում այդ կառույցները կայացած չեն: Մասնագետները պնդում են, որ Հայաստանի Հանրապետությունում արհեստակցական միությունների ոլորտին առնչվող օրենքները լավ են մշակված և համապատասխանում են միջազգային պահանջներին, սակայն չկան դրանց իրականացման մեխանիզմներ և համապատասխան միջավայր, ինչի հետևանքով աշխատողների իրավունքների խախտման դեպքում արհմիությունը չի հանդիսանում այդ խնդիրները բարձրացնող կառույցը և աշխատանքի պետական տեսչությունն ըստ էության ստանձնում է աշխատանքային խախտված իրավունքների մասին բարձրաձայնողը, սակայն

միաժամանակ չունի բավարար լծակներ և նախաձեռնողականություն այդ խնդիրները հիմնավորապես լուծելու համար:

Շրջակա միջավայրի պաշտպանության իրավունք

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը:

Պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար:

Առողջ շրջակա միջավայր ապահովելու նպատակով պետությունը պետք է իրականացնի ներկա ու ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականություն:

Վերջին տարիների ընթացքում տեղի ունեցող բազմաթիվ բողոքի ակցիաներ հանքերի շահագործման (Թեղուտ), հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման (Թռչկան) վերաբերյալ կայացված որոշումների դեմ վկայում են սակայն, որ բնական պաշարների, ջրային ռեսուրսների, կանաչ տարածքների (Մաշտոցի պուրակ) սահմանափակման վերաբերյալ որոշումները իրավասու մարմինների կողմից կայացվում են առանց տվյալ համայնքի բնակիչների մասնակցության և կարիքների գնահատման, ինչն արդարացի ընդվզման պատճառ է դառնում:

Վերջին տարիներին շեշտակի աճող անոմալ ծնունդների և գենետիկ հիվանդությունների թիվն էլ իր հերթին վկայում է, որ պետության կողմից պատշաճ վերահսկողություն չի իրականացվում հանքերի շահագործման ընթացքում բնապահպանական անվտանգության ապահովման նկատմամբ:

Բավարար կենսամակարդակի իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար, որոնք նպատակ ունեն՝

ա. նպաստել բնակչության զբաղվածությանը և աշխատանքի պայմանների բարելավմանը.

բ. խթանել բնակարանային շինարարությունը, նպաստել յուրաքանչյուր քաղաքացու բնակարանային պայմանների բարելավմանը.

Սոցիալական ապահովության իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով:

Պետությունն, ունենալով պարտավորություն ապահովել իր երկրի բնակիչների բավարար կենսամակարդակի իրավունքը, սոցիալապես անապահով ընտանիքներին ընդգրկում է աղքատության նպաստ ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակներում՝ գնահատելով ընտանիքի անապահովության աստիճանը, ընտանիքի յուրաքանչյուր անդամի եկամուտը, ընտանիքի կազմը, ընտանիքի յուրաքանչյուր անդամի զբաղվածությունը, սոցիալական վիճակը:[7] Չնայած իրականացվող նմանատիպ միջոցառումներին՝ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր երրորդ բնակիչ աղքատ է:

Առողջության իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք: Դրանց ցանկը և մատուցման կարգը սահմանվում են օրենքով:

Առողջության իրավունքի ապահովման տեսանկյունից պետության խնդիրն է՝

ա. իրականացնել բնակչության առողջության պահպանման ծրագրեր, նպաստել արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծմանը.
բ. խթանել ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը.
գ. իրականացնել հաշմանդամության կանխարգելման և բուժման ծրագրեր, խթանել հաշմանդամների մասնակցությունը հասարակական կյանքին.

Բացի հանրային պոլիկլինիկաների միջոցով անվճար բժշկական սպասարկում իրականացնելուց, պետությունը ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված անձանց, հաշմանդամության կարգ ունեցող անձանց, մինչև 7 տարեկան երեխաների, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար երաշխավորում է անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը և դրանց ծավալները[8]: Այս իրավունքը իր մեջ ներառում է նաև անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունք որոշակի խմբերի համար: Առողջության իրավունքի տեսանկյունից օրակարգային է մնում անվճար ծառայությունների նկատմամբ որոշ բուժհաստատություններում ապօրինի վճարների սահմանումը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց

---

[7] Պետական նպաստների մասին ՀՀ օրենք http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=94822

[8] ՀՀ Կառավարության 4 մարտի 2004 թվականի N 318-Ն որոշում http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=94600

հաշմանդամության կարգի տրամադրման գործընթացի կոռումպացվածությունը[9]:

Կրթության իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Պետությունը պարտավոր է ապահովել հիմնական կրթության մատչելիությունը բոլորի համար: Օրենքով կարող է սահմանվել պարտադիր կրթության ավելի բարձր մակարդակ: Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարության սկզբունքները, ուսումնական հաստատությունների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով: Յուրաքանչյուր քաղաքացի ունի մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունք՝ օրենքով սահմանված կարգով: Պետությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ֆինանսական և այլ աջակցություն է ցուցաբերում բարձրագույն և այլ մասնագիտական կրթական ծրագրերին:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց սոցիալականացման և հանրակրթական ուսումնական հաստատություններում նրանց կրթությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության մի շարք դպրոցներում ստեղծվել են պայմաններ ներառական կրթության ապահովման համար, ինչը դեռևս կայացման փուլում է:

[9] ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության (ԲՍՓ) թափանցիկ և հաշվետվողական գործունեության վերաբերյալ զեկույց, Լիարժեք Կյանք ՀԿ,http://fulllife.am/doc/Full%20life_report%20BSPH.pdf

Իրավունքների պաշտպանության մեխանիզմներ

Անի Չատինյան

Մարդու և քաղաքացու իրավունքների ապահովման իր պոզիտիվ պարտականությունը պետությունն իրականացնում է տարբեր պետական և տեղական կառույցների միջոցով:

Իրավունքների ապահովման կարևորագույն պայման է համարվում պետության ներսում համապատասխան մեխանիզմների առկայությունը, որոնց միջոցով կարող են վերականգնվել խախտված իրավունքները: Իրավունքների պաշտպանության մեխանիզմները լինում են ներպետական և միջազգային:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

Մարդու իրավունքների և հիմանարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան սահմանում է՝ **յուրաքանչյուր ոք, ում սույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:**

Իրավունքների պաշտպանության կարևորագույն մեխանիզմները հետևյալն են:

Ոստիկանություն

Իրավունքների պաշտպանության առաջին միջոց ընդունված է դիտել ՀՀ ոստիկանությանը: Քանզի ոստիկանությունն է ապահովում մարդու անվտանգությունը, հանցագործությունների ու վարչական իրավախախտումների նախականխումը, կանխումը և խափանումը, հանցագործությունների հայտնաբերումը և բացահայտումը, կատարում է քրեական գործով նախնական քննությունը, հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգությունը: ՀՀ-ում մարդու իրավունքների վիճակի ուսումնասիրությունները, ինչպես նաև բնագավառում ունեցած փորձը փաստում են այն մասին, որ ոստիկանությունում են ամենից հաճախ ու ամենաշատը խախտվում մարդու իրավունքները:

Դատարաններ

Հայաստանի Հանրապետությունում գործում է եռաստիճան դատական համակարգ՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ, վերաքննիչ դատարան և վճռաբեկ դատարան:

Ընդհանուր իրավասության դատարանները համապատասխանաբար քննում են քաղաքացիական, վարչական և քրեական ուղղությունների բոլոր տիպի գործերը: Ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանները հայցադիմումի հիման վրա քննում են քաղաքացիաիրավական գործերը: Քրեական դատարանները հանցագործությունների շուրջ մեղադրանքի քննություն են իրականացնում: Վարչական դատարանները քննում են այն հայցերը, որոնց մի կողմը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ են կամ դրանց պաշտոնատար անձինք, իսկ մյուս կողմում իրավաբանական կամ ֆիզիկական անձ:

Վերաքննիչ դատարանները իրենց իրավասության սահմաններում վերանայում են ընդհանուր իրավասության դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը՝ համապատասխան բողոքի հիման վրա:

Իսկ վճռաբեկ դատարանները քննում են այն գործերը, որոնցով կա օրենքի միատեսակ կիրառության խնդիր:

Մարդու իրավունքների պաշտպան

Իրավունքի պաշտպանության մեխանիզմ է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը: ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը անկախ և անփոփոխելի պաշտոնատար անձ է՝ իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ ղեկավարվելով օրինականության, հասարակական համակեցության և սոցիալական արդարության հիմնարար սկզբունքներով: Ելնելով խոշտանգումների դեմ կոնվենցիայի Կամընտիր արձանագրության դրույթներից՝ Մարդու իրավունքների պաշտպանը հանդիսանում է նաև ազգային կանխարգելման մեխանիզմ և որպես այդպիսին իրավունք ունի անարգել մուտք գործելու ՀՀ բոլոր փակ և կիսափակ հաստատությունները՝ խոշտանգման դեպքերի կանխարգելման և բացահայտման նպատակով:

ՀՀ Փաստաբանների պալատ

Փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով՝ իրավաբանական խորհրդատվություն, դատական ներկայացուցչություն, քրեական գործերով պաշտպանություն:

Սոցիալապես անապահով անձանց իրավունքների պաշտպանության համար ստեղծվել է հանրային պաշտպանի գրասենյակը, որն անվճար իրավաբանական աջակցություն է տրամադրում սոցիալապես անապահով անձանց քրեական և քաղաքացիական (վարչական) գործերով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Իրավունքների պաշտպանության կարևորագույն մեխանիզմ է նաև մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որը քննում է մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքների խախտման դեպքերով ներկայացված գործերը: Եվրոպական դատարան կարելի է ներկայացնել այն գործերը, որոնցով սպառվել են ներպետական հնարավոր միջոցները և վերջնական դատական ակտի կայացումից հետո 6 ամսվա ընթացքում:

Իրավապաշտպան հասարակական կազմակերպություններ

Հասարակական կազմակերպությունները ստեղծվում են իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հասարակությանը, նրա առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով:

Իրավապաշտպան հասարակական կազմակերպությունները մեծ ներդրում ունեն մարդու իրավունքների բնագավառում իրավակիրառ պրակտիկայի բարելավման գործընթացքում: Իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններն իրենց գործունեությամբ նպաստում են մարդու իրավունքների և դրանց պաշտպանության վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացմանը, քաղաքացիական վերահսկողություն են իրականացնում իշխանությունների կողմից մարդու հիմնական իրավունքների և ազատությունների ապահովման նկատմամբ, ինչպես նաև կոնկրետ գործողություններ են ձեռնարկում առանձին քաղաքացիների իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

Տեղեկատվության, խոսքի և արտահայտման ազատություն

Մարիաննա Գրիգորյան

Յուրաքանչյուր երկրի համար խոսքի և արտահայտման ազատությունը նախ և առաջ այն կարևոր և հիմնարար առանցքներից է, որի վրա խարսխվում են ազատ և ժողովրդավարական երկիր կառուցելու ու իրավագիտակից հասարակություն ունենալու հիմքերը:

Խոսքի ազատությունը յուրաքանչյուր մարդու ազատ արտահայտվելու իրավունքն է, որն ամրագրված է նաև ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով, ըստ որի, **ամեն ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը**:

Արտահայտման ազատությունն, առհասարակ, ինքնին շատ թանկ երևույթ է, որի ձեռքբերման համար զարգացած և ժողովրդավարական երկրները դժվարին և պայքարով լի ճանապարհ են անցել:

Սա է նաև պատճառը, որ միջազգային իրավապաշտպան լրագրողական կազմակերպությունների ամենամյա զեկույցներով և գնահատականներով մամուլի ազատության ցուցիչներով առաջատարի դիրքերում են զարգացած և ժողովրդավար երկրները, որտեղ խոսքի ազատությունն ու ազատ մամուլը վաղուց կայացած ինստիտուտներ են՝ ծանրակշիռ ազդեցությամբ:

Խոսքի և արտահայտման ազատությունը հասարակության ինքնագիտակցությունը բարձրացնելու, ճշմարտության և արդարության համար պայքարելու, սեփական իրավունքները պաշտպանելու, կոռուպցիոն երևույթներ բացահայտելու և բազմաթիվ խնդիրներ վեր հանելու, լուծելու լավագույն զենքերից մեկն է: Օրինակ՝ տարբեր հետաքննական «բացահայտող» հոդվածների արդյունքում վերջին տարիներին Նորվեգիայի առնվազն հինգ նախարար հրաժարականի դիմում է ներկայացրել:

Այնուամենայնիվ նմանատիպ երևույթների դեմ պայքարում մեծ դեր են խաղում ոչ միայն լրատվամիջոցները, այլ նաև քաղաքացիական հասարակությունը, ազատության և իրավունքի համար պայքարող ամեն մի գիտակից քաղաքացի: Ըստ այդմ իրավիճակի փոփոխություն կարելի է ակնկալել, այն ժամանակ, երբ առկա տեղեկատվությունը գրագետ կերպով կիրառվի քաղաքացիական պահանջատիրության տեսանկյունից:

Թեև վերջին տարիներին միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների ամենամյա զեկույցներում մամուլի ազատության ցուցիչներով, Հայաստանում բարելավում է նկատվում,

այնուամենայնիվ, ազատ մամուլը Հայաստանի նման զարգացող երկրում դեռևս մեծ շքեղություն է, քանի որ լրատվամիջոցները անկախության և ինքնուրույնության չափազանց սահմանափակ հնարավորություններ ունեն: Այդ իսկ պատճառով Հայաստանում մամուլը հիմնականում բևեռացված է, կամ էլ ծառայում է կուսակցական, քաղաքական ուժերի շահերին և ոչ թե իր հիմնական նպատակին՝ համակողմանի և հավասարակշռված լրատվության հաղորդելուն:

Ինտերնետ հասանելիությունն ու իրավիճակի փոփոխությունը

Եթե ընդամենը մի քանի տարի առաջ Հայաստանում ինտերնետը հասանելի էր բնակչության շատ փոքր խմբին, ապա վերջին 3-4 տարիների ընթացքում ինտերնետ օգտատերերի թիվը աննախադեպ թռիչք է ապրել՝ աճելով շուրջ 800 %: Սա չափազանց մեծ թիվ է:

Օգտատերերի թվի սրընթաց աճի շնորհիվ բարձրացել է ինտերնետի ազդեցությունը ցանցից դուրս: Սոցիալական ցանցերում տարբեր խնդիրների դեմ պայքարող նախաձեռնող խմբերի, Youtube-ում տեղադրված աղմկահարույց տեսանյութերի տեսքով, որոնք նաև վերահրապարակվում և ավելի լայնորեն են տարածվում օրեցօր մեծ լսարաններ գրավող օնլայն լրատվամիջոցներում:



Սպայի՝ զինվորականներին ստորացնելու տեսանյութը, ուսուցչի՝ երեխային բռնության ենթարկելը, և էլի շատ ու շատ տեսանյութեր մի քանի տարի առաջ Youtube-ում հայտնվելով մեծ աղմուկ բարձրացրեցին՝ ստիպելով իշխանություններին որոշումներ ընդունել, ինչը մի քանի տարի առաջ ուղղակի անհնար կլիներ: Այս նախադեպերը վկայեցին, որ ինտերնետ հասանելիությունը և սոցիալական ցանցերի ընգրկվածությունը կարող են մեծ փոփոխություններ բերել:

Այս ամենը դեռևս իշխանության վերին օղակների գործունեությանը չի հասնում, սակայն քաղաքացիների՝ իրենց իրավունքները հասկանալու և կիրառելու դեպքում շատ բան կարող է փոխել:

Սոցիալական ցանցերի՝ հատկապես Facebook-ի տարածումը կարողացել է որոշակիորեն փոփոխել նաև հեռուստատեսային

օրակարգը՝ ստիպելով անդրադառնալ ցանցում առավել շատ քննարկվող նյութերին, որոնք այլ իրավիճակում կձգտեին կոծկել:

Ինտերնետ հասանելիությունը հնարավորություն է տալիս շատ արագ իրազեկվել տեղի ունեցող իրադարձությունների մասին, մշտապես լինել տեղեկացված, սակայն ունի նաև իր բացասական կողմերը: Տեղեկատվության տարածման արագության նկատմամբ պահանջները չեն կարող բացասաբար չազդել ներկայացվող տեղեկատվության որակի վրա: Օրեցօր աճող օնլայն լրատվամիջոցների համար մրցակցության առարկա է դառնում, ոչ թե լրատվության նյութի որակը, այլ լսարանին գրավելու արագությունը, ինչի արդյունքում, ներկայացվում է չհաստատված տեղեկատվություն՝ «սենսացիոն» վերնագրով, որը կարողանում են մեծ լսարաններ հավաքել: Սա էլ իր հերթին հնարավորություն է տալիս նպատակաուղղված ապատեղեկատվություն տարածել: Այս միտումները նաև ուղղակիորեն ազդում են այն լրատվամիջոցների վրա, որոնք ունենալով տարիների պատմություններ և ավանդույթներ, նման միջավայրում իրենց մրցունակությունը պահպանելու համար սկսում են աշխատել նույն սկզբունքներով՝ ստիպված լինելով կիրառել ոչ ազնիվ մեթոդներ:

Սոցիալական ցանցերն ու խնդիրների բարձրաձայնման հնարավորություններ

Տարբեր ուսումնասիրություններ փաստում են, որ Հայաստանում ինտերնետ ընդգրկվածությանը զուգահեռ աճում է սոցիալական ցանցերի օգտատերերի թիվը: Ըստ 2014-ի դեկտեմբերի տվյալների Odnoklassniki.ru, MoiMir@Mail.ru, email@Mail.ru ակտիվ օգտատերերի թիվը կազմել է 1 307 000, այս թիվն աճել է հոկտեմբերի համեմատ +218 000 –ով[10]

Odnoklassniki.ru ակտիվ օգտատերերի թիվը կազմել է 926 000 (+58 000 աճ հոկտեմբերից)

Facebook սոցիալական ցանցի ակտիվ օգտատերերի թիվը կազմել է 740 000 (+ 60 000 աճ՝ հոկտեմբերից)

VKontakte օգտատերերի թիվը կազմել է 794 000 (+ 39 000 աճ՝ հոկտեմբերից)

[10] www.banman.am

Այս թիվ անհամեմատ մեծ է մի քանի տարի առաջ արձանագրված տվյալներից, երբ շատերը չգիտեին էլ, թե ինչ են իրենցից առհասարակ ներկայացնում սոցիալական ցանցերը:

Օգտատերերին սոցիալական կայքեր բերողը ոչ միայն ժամանցն է, դասընկերներին գտնելն ու անձնական կապերը թարմացնելը, նոր ծանոթություններ հաստատելը, այլև գաղափարակիցների հետ շփվելը, տեղեկություն ստանալն ու հարցեր բարձրացնելը, նախաձեռնություններ ստեղծելը և որոշ խնդրի շուրջ համախմբվելը: Այս առումով հատկապես հաճախ կիրառվում է Facebook սոցիալական ցանցի կայքը:

Սոցիալական ցանցերը չափազանց մեծ տեղ են սկսել զբաղեցնել շատերի կյանքում՝ ինչ-որ առումով դառնալով անձնական կյանքի շարունակություն: Դրանք լրատվությանը և իրադարձություններին ծանոթանալու լավագույն տարբերակ են դարձնել՝ կենտրոնացնելով բոլոր լրատվամիջոցների լուրերը և դրանց արձագանքները:

Սոցիալական ցանցերը՝ ինտերնետ հասանելիության և օգտատերերի մեծ թվի շնորհիվ հնարավորություն են ընձեռում համախմբվել խնդիրների շուրջ, բարձրաձայնել դրանց մասին, իրազեկել մարդկանց, միավորվել և դուրս գալ պայքարի՝ այս կամ այն հիմնախնդրի լուծման նպատակով:

Վերջին տարիներին, ի շնորհիվ ֆեյսբուքյան նախաձեռնությունների և նախաձեռնող խմբերի, մենք տեսնում ենք, թե ինչպես է զարգացել և ինչ արդյունքների է հասնում քաղաքացիական համերաշխությունը՝ ինչպես օրինակ քաղաքացիական պայքարի կենտրոն դարձած Մաշտոցի պուրակի դեպքում էր, կամ ուղեվարձի թանկացման դեմ ծավալված պայքարի, որոնք նախադեպային նշանակություն ունեցան:

Սակայն, ժողովրդավարության և մարդու իրավունքների առումով դեռևս երկար ճանապարհ ունեցող մի երկրում, ինչպիսին Հայաստանի Հանրապետությունն է, նման հաջողությունները դեռ հազվադեպ են: Այնուամենայնիվ, սոցիալական ցանցերի ընձեռած աննախադեպ մեծ հնարավորությունները շարունակվում են զարգանալ ու ավելի մեծ տարածքներ ընգրկել:

Քաղաքացի լրագրող

Ինտերնետ հասանելիության աննախադեպ աճը, և սոցիալական ցանցերի ընձեռած բազմաթիվ հնարավորությունները վերջին տարիներին հանեցին այն սահմանափակումները, որոնցով մինչ այդ լրատվության հաղորդելու մենաշնորհին, ըստ էության, պատկանում էր լրատվամիջոցներին:

Տեխնոլոգիայի բուռն զարգացման ժամանակաշրջանում յուրաքանչյուր անձ այսօր կարող է հաղորդակցման տարբեր սարքերի միջոցով տեսաձայնագրել, ձայնագրել, լուսանկարել և ահազանգել այս

կամ այն խնդիր, թերացումներ, խախտում, բռնություն և այլ երևույթներ, հաշված վայրկյանների ընթացքում նյութը տեղադրել սոցիալական ցանցերում, YouTube-ում, բլոգերում, կամ Թվիթերի միկրոբլոգում և հասարակական մեծ արձագանք ստանալ:

Մի խոսքով, վերջին տարիներին ինտերնետ հասանելիությանը զուգահեռ նշանակալիորեն զարգացավ քաղաքացիական կամ հանրային լրագրության ինստիտուտը: Մտահոգ քաղաքացիների ձայնը լսելի դարձավ և շարունակեց ավելի ու ավելի բարձր հնչել:

Հանրային լրագրության միջոցով քաղաքացիական ակտիվիստը, իր երկրի մասին մտածող մտահոգ քաղաքացին կարող է բարձրաձայնել բնապահպանական խնդիրների, քաղաքաշինական կոպիտ խախտումների, բռնությունների, իր բնակավայրում արձանագրված այս կամ այն արատավոր կամ մտահոգիչ երևույթի մասին, կամ ահազանգ հնչեցնել պաշտոնական դիրքի չարաշահման մասին:

Պրոֆեսիոնալ լրագրությունն այս դեպքում գալիս է ամբողջացնելու պատկերը: Խորքային, բազմակողմանի անդրադարձով, վերլուծությամբ, հետաքննություններով լրագրությունը կարող է նպաստել քաղաքացիական ակտիվիստների բարձրացրած խնդիրների հանրության օրակարգում հայտնվելուն:

Իհարկե հաճախ ճիշտ հակառակն է տեղի ունենում, երբ որոշ լրատվամիջոցներ ուղղորդված հաղորդումներով և հրապարակումներով փորձում են վարկաբեկել սկիզբ առած քաղաքացիական շարժումը՝ օգտագործելով հնարավոր մեդիա գործիքները, ազդեցության բոլոր հնարավորությունները: Այնուամենայնիվ, սկիզբ առած շատ շարժումների հաջողության բանալին հենց քաղաքացիական ակտիվիստների և լրագրողների սերտ համագործակցության և նպատակների միասնության արդյունքն է:

Այսպիսով, ինտերնետ հասանելիության և սոցիալական ցանցերի ընձեռած հնարավորությունների կողքին, քաղաքացի լրագրողները, կարող են շրջադարձային փոփոխություններ բերել, թեև շատ շարժումներ սկիզբ են առել հենց պրոֆեսիոնալ լրագրության՝ մասնավորապես հետաքննական լրագրությամբ բացահայտված աղմկահարույց չարաշահումների ու խախտումների հետևանքով:

Փաստարկված, բազմաթիվ կողմերից դիտարկված, վիճակագրական տվյալներով և փորձագիտական եզրակացություններով և կարծիքներով հարուստ նյութը հրաշալի աղբյուր կարող է դառնալ այս կամ այն խնդիրը ծանրակշիռ մակարդակով վեր հանելու և պահանջներ ձևակերպելու և առաջադրելու համար:

Հայաստանում, օրինակ, մշտապես հնչում են մտահոգություններ անպատասխանատու հանքարդյունաբերության, շրջակա միջավայրի աղտոտման մասին, որն ուղղակիորեն նպաստում է բնակչության շրջանում հիվանդացությունների աճին, վերարտադրողական առողջության խնդիրների ի հայտ գալուն և այլն:

Տարիների ընթացքում համապարփակ և ամբողջական լրագրողական հետաքննությունների շնորհիվ է, որ բնապահպան ակտիվիստները հնարավորություն ունեցան ավելի լիարժեք տեղեկություններ ստանալ երկրի այս կամ այն հատվածում շրջակա միջավայրի՝ ծանր մետաղներով աղտոտվածության աստիճանի, դրա հետևանքով քաղցկեղի, շնչառական, մաշկային և վերարտադրողական հիվանդությունների աճի, անոմալ ծնունդների թվի աճի մասին:

Ահազանգերն ու հետաքննական ծանրակշիռ նյութերը բնապահպան ակտիվիստներին օգնեցին հստակեցնել խնդիրներն ու պահանջները, քաղաքացիական պայքարի օղակներում ավելի ուղղորդված շարունակելու պայքարը՝ ունենալով հստակ փաստեր և փորձագիտական եզրակացություններ:

Ուստի, քաղաքացիական պայքարի երկար և դժվարին ճանապարհին շատ տեղին է սերտորեն աշխատել լրագրողների և լրատվամիջոցների հետ, զուգահեռաբար օգտագործելով սոցիալական ցանցերի, YouTube-ի, բլոգերի և միկրոբլոգերի հնարավորությունները ավելի ամբողջական և ուղղորդված ազդեցություն ունենալու և փոփոխության հասնելու համար:

Լրագրողական որակյալ նյութի պատրաստման խորհուրդներ

Երրորդ դեմք – Հոդվածում կարևորը ոչ թե ձեր կարծիքն է, այլ ամբողջական տեղեկությունները, փորձագետների կարծիքները, վիճակագրությունը, մարդկային պատմությունները գրագետ ու կապակցված շարադրելը, որով կկարողանաք ընթերցողին առավելագույնս իրազեկել խնդրին և ներկայացնել ստեղծված իրավիճակն ու պատկերացում տալ վաղվա մասին: Ուստի պիտի մոռանաք ձեր անձը հոդված գրելիս, ոչ մի «իմ կարծիքով», ոչ մի «ես» և առավել ևս ոչ մի զգացմունքային երկարաշունչ սեփական եզրահանգումներ հոդվածում: Ձեր հոդվածի շարադրանքը պետք է լինի երրորդ դեմքով և ոչ թե առաջին: Սա պրոֆեսիոնալ լրագրության կարևոր սկզբունքներից մեկն է:

Հոդվածի տեսանկյունը և կառուցվածքը - եթե ունեք թեմա, որին անդարադառնալու եք, մտովի պատկերացրեք հոդվածի տեսանկյունը, այսինքն ինչի մասին եք գրելու, ինչն է լինելու ձեր ասելիքը, ում հետ եք խոսելու, ինչ եք ընթերցողի դատին ներկայացնելու: Շատ կարևոր է հետաքրքիր տեսանկյուն գտնելը, ինչը հնարավորություն կտա ոչ միայն հետաքրքիր հոդված պատրաստել, այլ վեր հանել այն թաքնված խնդիրները, որոնց մասին նախկինում չի խոսացվել: Շատ կարևոր է լիդի ընտրությունը: Լիդը նյութի

սկիզբն է, առաջին պարբերությունը: Աշխատեք գրել այնպիսի լիդ, որը միանգամից ընթերցողին կկարողանա թեմայի մեջ ներգրավել: Լիդից բացի, շատ կարևոր է հոդվածի կառուցվածքը և տրամաբանական շրջանակը: Աշխատեք պարբերությունները մեկը մյուսին կապել տրամաբանորեն: Այս դեպքում ընթերցողը առանց ձանձրանալու մի շնչով կկարդա ձեր հոդվածը, որքան էլ այն ծավալուն ու լուրջ խնդիրներ վեր հանի: Եթե դուք ծավալուն հոդված եք պատրաստում կարող եք օգտագործել ենթավերնագրեր:

Հերոս - բարդ ու երկար ծանրաբեռնված տեսական նախադասությունների փոխարեն մարդկային պատմություններ պատմեք, հատկապես, եթե շատ լուրջ ու կարևոր խնդրի եք անդրադառնում: Շատ կարևոր է ոչ թե ասել «սարսափելի վիճակ էր», այլ ցույց տալ այդ ամենը բառերով: Իրավիճակը պետք է ցույց տալ բառերով՝հերոսների խոսքերով (նույնիսկ ամենափոքր դետալների նկարագրությամբ), առանց տողերն ածականներով խեղդելու: Մարդկային պատմությունները, հերոսները շունչ են տալիս հոդվածներին, ավելի հետաքրքիր և հասանելի լեզվով պատմում ամենաբարդ խնդիրների մասին, այն մասին, թե ինչ վիճակ է ստեղծվել, ինչ է տեղի ունենում, ինչ է սպասվում և այլն: Համադրելով այլ աղբյուրների՝ վիճակագրության, փորձագիտական եզրակացությունների և այլնի հետ՝ դուք արդյունքում կունենաք ազդեցիկ և հետաքրքիր պատմություն՝ բազմակողմանի և լուրջ հոդված:

Աղբյուրներ - Հոդված գրելիս մի քանի աղբյուրներից օգտվեք: Խնդիրն ավելի համապարփակ ու համակողմանի լուսաբանելու համար խոսեք բոլոր կողմերի հետ, ինչքան էլ ընդունելի կամ անընդունելի լինեն ձեզ համար այս կամ այն կողմի տեսակետները: Մի մոռացեք վիճակագրական վերլուծության մասին: Խոսեք փաստերով, եթե խոսում եք առանց ֆիլտրերի իրականացվող հանքարդյունաբերության մասին և խոսում եք բնակչության հիվանդության դեպքերի մասին, բժիշկների և այլ մասնագետներից մեկնաբանություններ վերցնելուց բացի, մի մոռացեք վիճակագրության մասին: Վիճակագրության վերլուծությունը փաստարկված լուրջ հիմքեր կընձեռի ձեզ ներկայացնելու ստեղծված իրավիճակը, համեմատություններ անելու այլ բնակավայրերի հետ, պարզաբանումներ ստանալու պատկան մարմիններից:

Լուսանկարներ, տեսանյութեր - Պարտադիր մտածեք լուսանկարների մասին, լավ ընտրված լուսանկարները հրաշալի կլրացնեն ձեր հոդվածը՝ ավելի ազդեցիկ ու վստահելի դարձնելով այն: Լուսանկարի ուժը շատ մեծ է, իսկ երբ այն ուղեկցում է բազմակողմանի և փաստարկված հրապարակմանը, շատ մեծ արձագանք կարող է ստանալ: Օրեցօր զարգացող տեխնոլոգիական ժամանակաշրջանում, կարող եք օգտագործել ոչ միայն լուսանկարներ, մուլտիմեդիա, այլև տեսանյութեր, որոնք իրենք իրենցով իսկ կարող են համացանցում տարածվելով խնդրի մասին իրազեկեն հազարավոր մարդկանց:

Գրագիտություն, փաստերի ստուգում - Միշտ հիշեք, որ լուրջ հրապարակումը պիտի գրագետ լինի, առանց սխալների: Տառասխալները, բացթողումները ընթերցողի մոտ անլրջության տպավորություն են ստեղծում: Եթե սրբագրիչ չկա, մինչ հրապարակումը փորձեք առնվազն երկու-երեք անգամ վերընթերցել ձեր հոդվածը, կամ խնդրել ձեր թիմակիցներին «կողմնակի աչքով» վերանայել նյութը: Բացի գրագիտությունը, շատ կարևոր է ստուգել փաստերն ու թվերը, որոնք կներկայացնեն ձեզ հարցազրույցի մասնակիցները: Երբեք ավելորդ չէ ամեն ինչ կրկին ստուգել, եթե ձեզ համար կարևոր է որակյալ քաղաքացի լրագրող լինելը, ով ուզում է իր աշխատանքով հասարակական փոփոխությունների հասնել:

Լրատվություն և ապատեղեկատվություն

Մարիաննա Գրիգորյան

ՁԼՄ-ների հիմնական գործառույթները

ՁԼՄ-ների հիմնական գործառույթը տեղեկատվություն հաղորդելն է, այսինքն՝ անաչառ և համակողմանի տեղեկություններով հասարակությանն իրազեկելը տեղի ունցող զարգացումների, սպասվող փոփոխությունների վերաբերյալ, ինչպես նաև վեր հանել խնդիրներ, կատարել բացահայտումներ և հետաքննություններ:

Սակայն, այս ամենի հետ մեկտեղ, լրատվամիջոցները համարվում են չորրորդ իշխանությունը, որոնք մասնակցում են հանրային արժեքների ձևավորմանը, տրամադրությունների ստեղծմանը, հանրային կարծիքի ձևավորմանը: Այս ազդեցության շնորհիվ, ՁԼՄ-ները հատկապես զարգացող երկրներում, օգտագործվում են տարբեր ուժերի կողմից որպես մանիպուլյացիաների գործիք՝ հասարակության լայն զանգվածներին ապատեղեկատվությամբ ուղղորդելու, գաղափարախոսություն տարածելու և այլ նպատակների համար:

ՁԼՄ-ները՝ որպես ներքին հարցերի լուծման գործիքներ

Եթե անկողմնակալ և հավասարակշռված լրատվամիջոցների գոյությունը զարգացած երկրների համար վաղուց սովորական երևույթ է, ապա զարգացող երկրների համար՝մեծ շքեղություն, քանի որ նման երկրներում մամուլը հիմնականում բևեռացված է և ծառայում է այս կամ այն ուժի շահերին:

Չունենալով անկախություն և ֆինանսական ազատություն, որին քաղաքակիրթ աշխարհում լրատվամիջոցները հիմնականում հասնում են բազմահազար տպաքանակի և գովազդից ստացվող եկամուտներով՝ զարգացող երկրներում՝ ներառյալ Հայաստանում, լրատվամիջոցները՝ փոքր բացառություններով, հիմնականում հարում են այս կամ այն քաղաքական ուժին, կամ գործչին և տրամադրում կողմնակալ և բևեռացված տեղեկություններ:

Այսինքն, չունենալով անկախություն և ֆինանսական ինքնաբավություն՝ լրատվամիջոցների մեծ մասը ներքին հարցերի լուծման գործիք է դառնում, կամ ի սկզբանե հենց այդ նպատակներով էլ ստեղծվում է՝ հանրությանը ներկայացնելով կողմնակալ և անորակ լրատվություն ու մակերեսային վերլուծություններ:

Արդյունքում լրատվամիջոցները շեղվում են իրենց հիմնական գործառույթներից և սկսում են ծառայել այս կամ այն կողմին, ինչի հետևանքով լրատվական դաշտը գնալով արժեզրկվում է և հանրությունը չի հասկանում ում վստահել, ինչ անել, որ լրատվությունը համարել արժանահավատ:

Կասկածելի աղբյուրներն ու ապատեղեկատվությունը

Ապատեղեկատությունը լայնորեն օգտագործվել և օգտագործվում է պատերազմական իրավիճակներում՝ հակառակորդին ապակողմնորոշելու, խուճապային տրամադրություն ստեղծելու և այլ խնդիրներ լուծելու համար:

Սակայն, ապատեղեկատվության մեխանիկան միայն պատերազմական պայմաններում չէ, որ կիրառվում է: Նպատակաուղղված ապատեղեկատվությունը մեծ արդյունավետությամբ օգտագործվում է զգայուն հարցերի, արժեքների շահարկման միջոցով տարբեր հարցեր լուծելու, ուղղորդելու, կարծիք ձևավորելու և տրամադրություններ ստեղծելու համար:

Ապատեղեկատվությունը տարբեր ազդեցիկ միջոցներով կիրառվում է հասարակության ուշադրությունը ինչ որ խնդիրներից շեղելու, խեղաթյուրված տեղեկություններով մարդկանց իրենց նախընտրած ուղղության տրամադրելու, իրականությունից շեղելու և հետևաբար ինչ-ինչ հարցեր լուծելու կամ կոծկելու համար:

Դրա վառ օրինակը վերջին տարիներին տեղական ՁԼՄ-ներով Եվրոպայի բարքերը, ավանդույթները խեղաթյուրված ներկայացնելն է, ինչը հատկապես ակտիվացավ 2013 թվականին՝ Հաաստանի Հանրապետության՝ Մաքսային միությանը միանալու վերաբերյալ որոշման հրապարակումից հետո: Եվրոպական արժեքների դեմ սկսված արշավը՝ խեղաթյուրված փաստերով, անհավանական ֆանտաստիկ պատմություններով սկսեցին հեղեղել ոչ միայն առցանց լրատվականների լրահոսը, այլև բարձրացան հեռուստաթեթր, քարոզարշավին միացան Հայ առաքելական եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ:

Խիստ հակաքարոզչության արդյունքում Հայաստանում Եվրոպան հասարակության զգալի հատվածի կողմից ընկալվում է որպես «այլասերված», «փչացած», նույնասեռականներով և այլանդակ բարքերով լի երկրների միություն էր, ուր ոչ մի «սրբություն չկա»: Ընկալումներ, որոնք ուղղված են վարկաբեկելու մարդու իրավունքների, ժողովրդավարության, պաշտպանվածության, կոռուպցիայի դեմ պայքարի և իրավունքի գերակայության եվրոպական մշակույթը, որին երկար տարիներ ձգտել և հասել են եվրոպական երկրները:

Լրատվական աղմուկի ներկա պայմաններում ապատեղեկատվությունն ու անորակ լրատվությունը զանազանելու համար կարևոր է հիշել, որ տպագրված ամեն ինչ բացարձակ ճշմարտություն չէ, հատկապես, երբ լուրերի, հոդվածների աղբյուրները կասկածելի են և հղումներ չկան, իսկ բերված ընդհանուր եզրակացությունները հիմնավորված չեն փաստերով:

Քաղաքացիական ակտիվություն

Օլյա Ազատյան

Ոչ բռնի պայքարի փիլիսոփայությունը

Ցանկացած քաղաքական իշխանության գոյատևման հիմքում ընկած է ժողովրդի հնազանդությունը: Այն պահից, երբ մարդիկ ճանաչեն և հասկանան, որ իրենց ճնշող քաղաքական համակարգի հենասյուները հենց իրենք են, կսկսվի փոփոխությունը: Փոփոխությունը սկսելու համար անհրաժեշտ է մանրամասն պլանավորում: Պլանավորման հիմքում համայնքների հետ աշխատանքն է՝ նրանց համախմբելու և պայքարին մասնակից դարձնելու համար: Ոչ բռնի պայքար ձևավորելու և իրականացնելու համար, անհրաժեշտ է հասկանալ քաղաքական ուժի բնույթը:



Ըստ Ջին Շարփի, հասարակության մեջ քաղաքական ուժի հիմնական աղբյուրները, որտեղ գտնվում են որոշում կայացնողները, ինստիտուտները, կազմակերպությունները և տարատեսակ շարժումները, ներառում են հետևյալ էլեմենտները[11].

Իշխանություն - Հրաման արձակելու կարողություն: Այն ձևավորվում է դանդաղ և համբերատար և հեշտությամբ կարող է կորսվել, եթե փորձեն հասարակությանը արհամարհել, խոստումները չկատարել և դրական արդյունքների չհասնեն:
Մարդկային ռեսուրսներ - Յուրաքանչյուր կազմակերպության կամ ղեկավարի ուժը կախված է այնտեղ աշխատող մարդկանց քանակից:
Հմտություն և գիտելիք - Որքան հմուտ և խելացի են ցանկացած կազմակերպությունում աշխատող մարդիկ, այնքան արդյունավետ է գործում տվյալ կառույցը:
Նյութական ռեսուրսներ - Փողը և այլ նյութական միջոցները կարող են բազմապատկել այլ իշխանության աղբյուրները: Օրինակ՝ տպագրություն, գրասենյակ, համակարգիչներ, նորագույն տեխնոլոգիաների կիրառում, որոնք իրենց հերթին կարող են նպաստել այլ ուժերի առաջացմանը:
Պատժամիջոցներ - Իրականում ոչ թե պատժամիջոցները, այլ դրանից ունեցած վախն է, որ առաջացնում է ուժի աղբյուր: Եթե կազմակերպությունը ունի պատժամիջոցներ և դրանք կիրառելու հավանականություն, ապա այն վախ է ստեղծում և համապատասխանաբար՝ ուժ:
Անշոշափելի գործոններ - Սրանք հոգեբանական, ավանդական, մշակութային, կրոնական և երբեմն էլ գաղափարական (սովորույթներ, արժեհամակարգ, պատասխանատվության զգացում), որոնք կարող են ստիպել մարդկանց ենթարկվել կանոններին և նույնիկ նպաստել դրանց:

[11] From Dictatorship to Democracy, A Conceptual Framework for Liberation by Gene Sharp, 2002, http://www.aeinstein.org/wp-content/uploads/2013/09/FDTD.pdf

Ըստ Ջին Ծարփի, ոչ բռնի պայքարը տեխնիկա է, որը մերժում է պասիվությունը և որը տեսնում է պայքարը որպես հույժ կարևորություն և կարող է կոնֆլիկտը լուծել առանց ուժի կիրառման: Ոչ բռնի պայքարը չի արհամարհում կոնֆլիկտը: Այն ուղղակի այլընտրանքային արձագանք է խնդիրներին և ուսումնասիրում է, թե ինչպես կարող է արդյունավետ կիրառվել կոնֆլիկտի հաղթահարման ժամանակ հատկապես թե ինչպես և որքան արդյունավետ կարելի է փոխել ուժերի հարաբերակցությունը:

Փոփոխության առանցքը

Նախքան նախաձեռնությունը սկսելը, որոշ ժամանակ տրամադրեք և մտածեք ներքևում ներկայացված մի քանի հարցերի շուրջ: Անհրաժեշտ է, որ բոլոր հարցերն ունենան սպառիչ պատասխաններ, լինի վստահություն և պատասխանատվություն նախաձեռնությունը սկսելու համար:

1. Ո՞վքեր ենք մենք (ինչ գաղափարական պատկանելություն ունենք)
2. Ի՞նչ ենք անում (ինչ ծրագիր ունենք, որն է փոփոխության մեր տեսլականը, ինչ ենք ցանկանում փոխել, որն է մեր նպատակը առավել գլոբալ իմաստով)
3. Ո՞րտեղ ենք գործում (որ մակարդակներում ենք աշխատում, միայն համայնքային, մարզային, հանրապետական, թե միանում ենք գլոբալ շարժումներին և նախաձեռնություններին)
4. Ինչպե՞ս ենք անում (ինչ ռեսուրսներ կան կամ կարող ենք գտնել, որոնք են մեր մեթոդները, ինչ հասանելի գործիքներ կան, կամ կարող ենք ստեղծել)
5. Ի՞նչ մշակույթով ենք գործում (որոնք ենք մեր արժեքները և որ հարցերն են մեզ համար սկզբունքային, և այլն)

Խնդրի սահմանում

Նախաձեռնությունը սկսվում է խնդրի սահմանումից և նախաձեռնության արդյունավետ շարունակությունը կախված է, թե որքան կոնկրետ և օբյեկտիվ եք սահմանել խնդիրը:

Խնդրի սահմանումը այն հարցի կամ խնդրի նկարագրությունն է, որը կարիք ունի լուծման: Խնդրի նկարագրության ժամանակ օգտագործված բոլոր փաստերը պետք է ճշգրիտ լինեն և հիմնված հետազոտությունների արդյունքների վրա: Խնդրի կամայական և սուբյեկտիվ ձևակերպումներն ու մեկնաբանությունները նախաձեռնությանը կտանեն փակուղի:

Խնդրի սահմանումը հիմնականում բաղկացած է երեք մասից.

1. **Այն ինչ պետք է լիներ իրականում:** Նկարագրեք այն իրավիճակը որին ձգտում եք հասնել կամ ձևակերպված է Սահմանադրությամբ, օրենքներով կամ այլ փաստաթղթերով:
2. **Այն ինչ կա հիմա:** Նկարագրեք ներկա հանգամանքները և իրականությունը: Անհրաժեշտ է այս փուլում առանց էմոցիաների դատել և ներկայացնել ներկա հանգամանքները՝ մանրամասն և օբյեկտիվորեն վերլուծելով դրանք:
3. **Այն իրավիճակը և հանգամանքները**, որոնք խոչընդոտում են առաջին մասում նկարագրված իրավիճակին հասնել: Եղեք կոնկրետ և օբյեկտիվ:

Նպատակի ձևակերպում

Նպատակի ձևակերպումը նախաձեռնության հիմնասյունն է: Խորհուրդ է տրվում օգտագործել ներքևում նշված առաջարկությունները նպատակը առավել արդյունավետ ձևակերպելու համար:

- ☑ Երբ ձևակերպում եք նպատակը **եղեք կոնկրետ**, այն պետք է պատասխանի կոնկրետ հարցերի օրինակ՝ ով, ինչ, երբ, ինչու, ինչպես և այլն:
- ☑ **Նպատակը ձևակերպեք չափելի**, որպեսզի կարողանանք գնահատել և այն մշտական մոնիթորինգի ենթարկել: Ստեղծեք չափանիշներ, որով էլ կչափեք ձեր գործողությունները:
- ☑ **Իրատես եղեք**: Անհրաժեշտ է օբյեկտիվորեն վերլուծել և գնահատել իրավիճակը, ձեր ռեսուրսները և ուժերը և միայն դրանց համապատասխան սահմանեք իրականանալի նպատակ:
- ☑ **Կարևորությունը**: Անպայման քննարկեք, թե որքան է այն կարևոր ձեր և ձեր շրջապատի համար և արդյոք այն ռեսուրսները, որոնք կտրամադրեք այս խնդրի լուծմանը այդքան կարևորություն ունեն ձեր համար: Արդյոք հիմա ճիշտ ժամանակն է այդ հարցը բարձրացնելու և այլն
- ☑ Հարցը հանրային օրակարգ բերեք **ճիշտ ժամանակին**: Միշտ կարևոր է ձեր նպատակի և դրանից բխող գործողությունների համար սահմանել ժամանակ, կամ գործողությունները բաժանել ժամանակային միավորներով, սա նաև կարգավորում է ձեր գրաֆիկը:

Թիմային աշխատանք

Միայն վերջնանպատակի համընկնումը դեռևս թիմի ձևավորման նախապայման չէ: Թիմի կայացումը մեծապես կախված է թիմի ներսում վստահության և փոխադարձ պատասխանատվության ձևավորման կարողությունից, ինչպես նաև թիմային աշխատանքի ընթացակարգերի հստակությունից:

Թիմային աշխատանքը արդյունավետ կազմակերպելու և թիմում կոնֆլիկտներից խուսափելու համար խորհուրդ է տրվում.

- ☑ Խմբում հաստատել հորիզոնական հարաբերություններ և որոշումները կայացնել փոխադարձ համաձայնությամբ՝ կոնսենսուսով, այլ ոչ թե քվեարկությամբ: Այս մոդելը հնարավորություն է տալիս բոլորին հավասարապես մասնակցելու: Խորհուրդ է տրվում գրել և արխիվացնել բոլոր որոշումները:
- ☑ Ստեղծել խմբի անդամների միջև ինֆորմացիայի փոխանակման մեխանիզմներ, ինչպես նաև տարբեր խմբերի համար հարաբերվելու հորիզոնական պլատֆորմ:
- ☑ Ստեղծել նոր անդամներ ընդունելու և անդամագրելու կարգ: Անընդհատ նոր մարդիկ են միանում նախաձեռնությանը և ոչ միշտ է հաջողվում սահուն ընդգրկվել թիմի մեջ: Այդ տհաճ պահերից խուսափելու համար կարելի է մշակել ընթացակարգեր նոր անդամների համար: Օրինակ՝ նախ զրուցել, թե ինչու է անձը անդամագրվում, ինչ կցանկանար անել և ինչ կարող է անել և այլն:
- ☑ Թիմը պայմանական խմբերի բաժանել, հետազոտություններ, տնտեսական, քաղաքագիտական վերլուծություններ, ֆինանսական բաժին, աշխատանք ՁԼՄ-ների հետ, բազմապլատֆորմ (multimedia) բաժին և այլն:
- ☑ Կարևորել շարունակական ինքնազարգացումը և ժամանակ առ ժամանակ ստուգել, թե ինչ նյութերի կամ գրականության կարիք կա, թիմի ներսում կազմակերպել քննարկումներ, բանավեճեր, հրավիրել դասախոսություններ և այլն:

- ☑ Պարբերաբար թարմացնել պահանջվող ռեսուրսների ցանկը:
- ☑ Աշխատել բաց, հաշվետու և թափանցիկ:
- ☑ Ժամանակ առ ժամանակ կազմակերպել լիցքաթափման երեկոներ՝ նշելով թիմի փոքր մարտավարական հաջողությունները:
- ☑ Անհատապես կրել այն արժեքները, որի համար թիմը պայքարում է՝ հանդուրժողականություն, արդարություն, թափանցիկություն, հաշվետվողականություն և այլն:

Դերակատարների քարտեզագրում

Ցանկացած խնդրի լուծման մեջ անհրաժեշտ է քարտեզագրել դերակատարներին՝ հասկանալու նրանց շահերը, հետաքրքրությունները, ռեսուրսները և նրանց ուժերը:

Անհրաժեշտ է քարտեզագրել հետևյալ դերակատարներին

- ☑ **Նախաձեռնողներ** – Մարդիկ են կամ խումբ, ովքեր նպատակադրված աշխատում են կոնկրետ միջավայրում և փորձում են ի մի բերել բոլոր հնարավոր ռեսուրսները խնդրի լուծմանը հասնելու համար: Այս մարդիկ հիմնականում նախաձեռնության անդամներն են:
- ☑ **Շահառուներ** – Նրանց հետաքրքրությունները ձեր հիմնական ռազմավարության առանցքում են:
- ☑ **Աջակիցներ** – այն մարդիկ կամ խմբերն են, որոնց հետաքրքրությունները և շահերը համընկնում են ձեր նախաձեռնության հետ և որոնք տրամադրում են ֆինանսական, քաղաքական կամ այլ աջակցություն և ռեսուրսներ: Նրանք կարող են անմիջական շահառուներ չլինել:
- ☑ **Ընդդիմություն** – այն անհատները կամ կազմակերպություններն են, որոնց շահերը և հետաքրքրությունները հակասության մեջ են ձեր շահառուների շահերի հետ: Այս ընդդիմությունը կարող է ակնհայտ չլինել և երբեմն կարող է հանկարծակի ի հայտ գալ նախաձեռնության ընթացքում:
- ☑ **Մրցակիցներ/Համագործակցողներ** - այն անհատներն ու կազմակերպություններն են, որոնց հետ կարող եք ունենալ ընդհանուր շահեր: Նրանք ևս կարող են ունենալ նույն շահառուները ինչ դուք, աջակցության նույն աղբյուրները կամ նույն հակառակորդը:

Դերակատարներին քարտեզագրելուց հետո, յուրաքանչյուրի համար առանձին կազմեք համագործակցության գործողությունների պլան և սահմանեք ժամկետներ:

Ռեսուրսների քարտեզագրում

Ռեսուրները հիմնականում բաժանվում են երկու խմբի: **Բնական ռեսուրսներ և ձեռքբերովի ռեսուրսներ**: Բնական ռեսուրներ՝ ժամանակ, էներգիա, մտքեր, տրամադրություն, հետաքրքրություններ: Ձեռքբերովի ռեսուրսներ՝ գումար, հմտություններ, գիտելիք, գրասենյակի տարածք և այլն: Անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ բոլոր ռեսուրսները վերանայել, թիմի համար կազմակերպել տարատեսակ դասընթացներ:

Ուժերի վերլուծություն

Ուժերի վերլուծության նպատակն է հասկանալ՝ **ինչպես և ում կողմից է գործադրվում այնպիսի ուժ,** որը փոխում է խնդրի բովանդակությունը և միջավայրը, որը մենք ցանկանում ենք փոխել:

Ուժերի ազդեցության ճիշտ վերլուծության դեպքում մենք կարող ենք ծրագրել արդյունավետ ռազմավարությունը և այն շարունակաբար վերանայել և հավասարակշռել մեր ուժերը անհրաժեշտության դեպքում: Կա ուժերը հավասարակշռելու երկու ձև՝

ա. կարող ենք շատ մարդիկ գրավել մեր կողմ
բ. կարող ենք չեզոքացնել մեր հակառակորդին՝ նրա վստահելիությունը թուլացնելով, օրինակ ազդել նրա ֆինանսավորողների վրա և այլն:

Ուժերի վերլուծություն - հիմնական կողմերն են՝

- ☑ Որոշում կայացնողներ – մարդիկ կամ խմբեր, որոնք փաստացի որոշում կայացնողներն են խնդրի լուծման կան փոփոխման համար (չշփոթել այն մարդկանց հետ, ովքեր կարող են ազդեցություն ունենալ պրոցեսի վրա)
- ☑ Կազմակերպված ընդդիմություն – կազմակերպված խմբեր, որոնք դեմ են մեր օրակարգին
- ☑ Կազմակերպված համախոհներ – կազմակերպված խմբեր, որոնք կողմ են մեր օրակարգին և աջակցում են
- ☑ Չկազմակերպված խմբեր – մարդկանց խմբեր, ում առնչվում է խնդիրը, բայց նրանք կազմակերպված չեն

Ուժերի ազդեցությունը հասկանալու համար պետք է անվանական նշել խնդրով առնչվող բոլոր անհատներին, կազմակերպություններին, երկրներին, բիզնեսին և այլն: Նրանց անհրաժեշտ է համապատասխանաբար տեղավորել չորս խմբերից մեկում:

		Մեծ	**Ցանկություն**	Փոքր
Ազդեցություն	Մեծ	**մեծ ազդեցություն, մեծ ցանկություն** - ազդեցիկ ուժ է և հետաքրքրված է հարցի լուծմամբ: Այս խմբի հետ անհրաժեշտ է հնարավորինս սերտ համագործակցել և շարունակաբար կապ պահպանել:		**մեծ ազդեցություն, փոքր ցանկություն** - ունի լծակներ հարցը լուծելու համար, սակայն չունի դրան անդրադառնալու բավարար ցանկություն: Անհրաժեշտ է փորձել շահել խմբի հետաքրքրությունը և նրանց մոտ առաջ քաշել հարցը լուծելու ցանկություն, որը պետք է բխի նաև նրանց շահերից:
	Փոքր	**փոքր ազդեցություն, մեծ ցանկություն** – այս մարդիկ կամ կազմակերպությունները հիմնականում հենց նախաձեռնության անդամներն են և նրանց առանցքում գտնվող կազմակերպությունները: Այս խմբի հետ առանձնապես աշխատանքի կարիք չկա, սակայն կարիք կա գործողությունների սերտ համակարգման և կանոնավոր հանդիպումների, քանի որ դրանք փոխլրացնող են		**փոքր ազդեցություն, փոքր ցանկություն** – այս խմբի մարդիկ կամ կազմակերպությունները հարցով հետաքրքրված չեն կամ չեն ցանկանում հետաքրքրվել: Նրանք նաև չունեն հարցի լուծման համար անհրաժեշտ լծակներ: Կարևոր է այս խմբի հետ աշխատել՝ հետաքրքրություն առաջացնելու համար՝ ավելացնելու աջակիցների թիվը:

Շարժման ռազմավարություն

Օլյա Ազատյան

Ռազմավարություն և մարտավարություն

Քաղաքացիական ու սոցիալական շարժումների հայտնի կազմակերպիչ Սոլ Ալինսկին[12] գրում է, որ ռազմավարությունը մի համալիր ծրագրի է, որը ցույց է տալիս, թե ինչ ունես և որի օգնությամբ էլ ստանում ես այն ինչ ցանկանում ես: Խոչընդոտները չեզոքացնելու և նպատակին հասնելու համար կարևոր է ճիշտ գնահատել և օգտվել հասանելի տարատեսակ ռեսուրսներից: Այլ կերպ ասած՝ ռազմավարությունը մի շարունակական գործողություն է, որը պարբերաբար վերանայման, ստուգման, լրացման կարիք ունի: Այն անփոփոխ գործողությունների ծրագիր չէ, ինչպես երբեմն ընկալվում է:

Պլանավորումը կարևոր է ռազմավարության համար, սակայն հավասարապես կարևոր է, թե նախաձեռնությունը որքան ճկուն է և որքան արդյունավետ է հակադարձում հակառակորդի քայլերին և առհասարակ նման տարատեսակ միջամտություններին: Հետևաբար ռազմավարությունը պետք է այնքան ճկուն լինի, որ կարողանա անհրաժեշտ պահերին արդյունավետ պատասխան քայլեր հաշվարկել, սակայն ոչ այնքան ճկուն, որ միայն առաջնորդվի հակառակորդի գործողություններին արձագանքելով:

Ռազմավարությունը երեք հիմնական մասերից է բաղկացած, թիրախավորում, ժամանակացույց և մարտավարություն: **Ճիշտ թիրախավորումը** թույլ է տալիս ամենաքիչ ռեսուրսների օգնությամբ հասնել առավելագույն արդյունքի: **Ժամանակացույցը** գործողությունները բաժանում է առանձին ժամանակային հատվածների և որոշ գործողություններ թիրախավորում է ըստ որոշակի ժամանակի՝ առավել արդունավետության հասնելու համար: Ժամանակացույցը կազմելու ժամանակ կարևոր է հաշվի առնել երկրում մի քանի կարևոր անկախ գործընթացների ժամանակը, օրինակ երբ են ընտրությունները և արդյոք կարելի է այդ ժամանակահատվածն օգտագործել ավելի արդյունավետ աշխատանքի համար: **Մարտավարությունները** այն կոնկրետ գործողություններն են, որոնցից բաղկացած է ողջ ռազմավարությունը: Մարտավարական գործողությունները ծրագրավորվում են ձեր առավելության վրա, և թիրախավորում հակառակորդի թուլությունը: Դրանք պետք է միավորեն ձեր շահառուներին, սակայն բաժանեն հակառակորդին: Նրանք պետք է ծառայեն ձեր նպատակներին: Լավ ռազմավարությունը ստեղծագործական շարունակական գործընթաց է, այն կազմվում է թիմի բոլոր անդամների ներդրումների և աշխատանքի արդյունքում:

[12] **Rules for Radicals**: A Practical Primer for Realistic Radicals, **Saul** D. **Alinsky, 1971, http://www.mynacc.org/Rules_for_Radicals.pdf**

Գործողությունների տեսակներ

Գործողությունների տեսակները բազմազան են և յուրաքանչյուր նախաձեռնություն ինքն է ընտրում դրանց տեսակն ու որակը:

Գործողությունները կարող են ներառել՝

- ☑ Դռնեդուռ քարոզարշավ՝ բացատրելու խնդիրը և դրա լուծման ուղիները
- ☑ Օրակարգերի ձևակերպում, ներառյալ հարցը հանրային օրակարգ բերել, փոխել հանրային օրակարգի հարցը, արգելափակել տվյալ հարցը և այլն
- ☑ Նամակագրություններ, բանավեճեր, հրավերներ, տեղեկությունների փոխանակում, տեխեկատվական հարցում և այլն
- ☑ Թերթոնների պատրաստում և տարածում, ինչ-որ հանդիպման մասին հանրային իրազեկում, և այլն
- ☑ Հանրային քննարկումների կազմակերպում
- ☑ Հետազոտություններ, որոնք սպառիչ կերպով կհիմնավորեն ձեր փաստարկները
- ☑ Պարբերական լրագրերի թողարկում, որը կպարունակի հոդվածներ, նկարներ, վերլուծություններ՝ ձեր դիրքորոշումը բացատրելու համար
- ☑ Ռեսուրսների հայթայթում
- ☑ Աշխատանք լրատվամիջոցների հետ
- ☑ Փակ և բաց բանակցություններ
- ☑ Երթեր, ցույցեր
- ☑ Դատական հայցի ներկայացում
- ☑ Դասադուլներ, գործադուլներ
- ☑ Ստորագրահավաքներ
- ☑ Հայտարարություններ
- ☑ Քաղաքական արվեստ
- ☑ Եվ այլն

Սոցիալական ցանցերի արդյունավետ օգտագործում

Քաղաքացիական նախաձեռնությունների կողմից առցանց միջոցների օգտագործման կարևորությունը թերևս չի վիճարկվում: Հատկապես Facebook-ի օգտագործումն, ինչպես նշվեց, օգնում է արդյունավետորեն ի մի բերել տեղեկատվությունը և մարդկանց, կազմակերպել քննարկումներ, կայացնել որոշումներ:

Facebook-ի ընձեռած հնարավորությունների լավագույն օգտագործման նպատակով խորհուրդ է տրվում.

1. Նախ կողմնորոշվել խումբ եք ուզում բացել, թե էջ - Խումբը հիմնականում հարմար է քննարկումների համար և այն կարող է լինել բաց, փակ կամ գաղտնի: Մինչդեռ էջը հիմնականում օգտագործվում է ինֆորմացիա տրամադրելու համար: Բազմաթիվ ակտիվ խմբեր ունեն էջ և խումբ, սակայն փորձը ցույց է տալիս, որ էջը ավելի նպատակահարմար է ակտիվիստական խմբերի համար:
2. Միշտ ակտիվ պահել էջը - Ամեն օր առնվազն երկու անգամ տեղեկություն տրամադրեք էջի անդամներին թեմային առնչվող զարգացումների մասին, ցանկալի է առաջին գրառումը կատարել առավոտյան և երկրորդը երեկոյան ժամերին: Սա խմբի անդամների ուշադրությունը պարբերաբար կպահի հակված ձեր էջին:
3. Ձեր խմբի էջը պարբերաբար տեղադրել հարցին առնչվող տարբեր խմբերում - Սրանով դուք ավելի շատ անդամներ կգրավեք ձեր խումբ: Օրինակ, եթե

ձեր խումբը որևէ բնապահպանական ուղղվածություն ունի, այս էջը կամ խումբը կարող եք տեղադրել բնապահապանական խնդիրներին առնչվող էջերում:

4. Ձեր խմբում կամ էջում հնարավորինս շատ տեսողական նյութեր տեղադրել - Քանի որ ֆեյսբուքում տեղեկատվության քանակը մեծ է, օգտատերերը հիմնականում յուրաքանչյուր տեղեկատվության ուսումնասիրման վրա ծախսում են ընդամենը կես րոպե: Ըստ այդմ, լուսանկարները և տեսանյութերը հիմնականում ավելի մեծ ազդեցություն են ունենում քան երկար տեքստերը:
5. Մանրամասն տեղեկատվություն ներկայացնել խմբի կամ էջի մասին - Խմբի կամ էջի մասին բաժնում հնարավորինս մանրամասն տեղեկացրեք, թե ինչի մասին է խումբը, ինչ հարցերի է անդրադառնում այն և այլն: Կարևոր է, որ խմբի կամ էջի հիմնական նկարները բնորոշեն խմբի էությունը:
6. Հնարավորինս արագ արձագանքել էջի քննարկումներին, խնդրանքներին և նամակներին – Արագ արձագանքումը ցույց կտա, որ դուք լրջորեն եք զբաղվում հարցով:
7. Պլանավորել գրառումները մեկ շաբաթվա կտրվածքով - Կազմեք ռազմավարություն և որոշեք, թե որ օրը ինչ նյութ եք տեղադրելու, հետևեք կառավարության գործողություններին կամ կազմակերպությունների զեյկույցներին, դրանք ևս անպայման տեղադրեք էջում:
8. Փորձեք ճանաչել խմբի անդամներին և հնարավորության սահմաններում նրանց ներգրավվել տարբեր քննարկումների մեջ – Օրինակ՝ ժամանակ առ ժամանակ հարցրեք, թե արդյոք այս կամ այն մասնագետներ կան խմբում և արդյոք նրանք կցանկանային ներգրավվել նախաձեռնող խմբի կազմակերպչական աշխատանքներում:
9. Լրատվամիջոցների հետ մշտական կապ պահպանեք - Լրատվամիջոցներին նշեք ձեր տարբեր հաղորդագրություններում: Կապ հաստատեք առանձին լրագրողների հետ, ում կկարողական զանգել անհրաժեշտության պահին:
10. Անպայման գրանցվեք այլ սոցցանցերում ևս, օրինակ հաշիվ բացեք Youtube-ում, որտեղ կտեղադրեք ձեր տեսանյութերը, գրանցվեք twitter-ում, և այլ սոցիալական ցանցերում, որպեսզի բազմապատկեք ձեր աշխատանքի արդունավետությունը:

Ծրագիր մեկ գործողություն կազմակերպելու համար

Օլյա Ազատյան

Իրավիճակի նկարագրություն	Նկարագրեք իրավիճակը, նաև ձեր հակառակորդի կեցվածքը և գործողությունը: Այնուհետև նկարագրեք այն ոլորտը, որտեղ իրականացնում եք ձեր ոչ բռնի պայքարի գործողությունը:
Կոնկրետ նպատակի սահմանում	Սահմանեք՝ Ինչու է այս գործողությունը կարևոր և այն ինչ կտա Ինչպես է իրականացվելու այդ գործողությունը (օրինակ՝ ցույց) Որտեղ և երբ է այն նախատեսվում Ովքեր են նախաձեռնում և ովքեր են մասնակցիները
Իրականացման ընթացքը	Քայլ առ քայլ, սկզբից մինչև վերջ շարադրեք բոլոր փուլերը, նախապատրաստականից մինչև ավարտ և գնահատում: Սահմանեք ժամանակացույց և նշանակեք պատասխանատուներ կոնկրետ հատվածների համար:
Կառավարում և պահանջվող ռեսուրսներ	Գրեք, թե ինչ ռեսուրսներ են անհրաժեշտ, ովքեր են պատասխանատու դրանց համար,եթե չկան, ինչպես գտնել այդ ռեսուրսները:
Համակարգում և հաղորդակցություն	Երբ և որքան հաճախ է կայանում թիմի հանդիպումները կազմակերպչական հարցերով տեղեկատվության փոխանակման համար: Ով է պատասխանատու համակարգման համար: Ինչ տեղեկություն եք հավաքելու, քննարկելու և այլն: Ինչպես եք իրականացնելու տեղեկատվության հավաքագրումը՝ հեռախոս, հանդիպում, էլ փոստ, հետազոտություն և այլն:

Ամփոփագիր

Օլյա Ազատյան

Նախաձեռնություն	**Խնդիր**	Այն ինչ կա, այն ինչ պետք է լիներ: Նշեք այն իրավիճակը և հանգամանքները, որոնք խոչընդոտում են հարցի լուծմանը:
	Նպատակ	Չափելի, կոնկրետ, իրատեսական, օբյեկտիվ, կարևոր, ճիշտ ժամանակին
	Թիմ	Հորիզոնական հարաբերություն, որոշումները կոնսեսուսով, ստեղծել խմբի անդամների միջև ինֆորմացիայի փոխանակման մեխանիզմներ, ինքնազարգացում, շարունակական գնահատում
	Ուժերի վերլուծություն	մեծ ազդեցություն - փոքր ցանկություն մեծ ազդեցություն - մեծ ցանկություն փոքր ազդեցություն - փոքր ցանկություն փոքր ազդեցություն - մեծ ցանկություն
	Ռեսուրսներ	Բնական և ձեռքերովի, դրանց կառավարումը
	Թիրախ	Ճիշտ թիրախավորումը՝ ամենաքիչ ռեսուրսների օգնությամբ հասնել առավելագույն արդյունքի
	Ժամանակացույց	Գործողությունները բաժանեք առանձին ժամանակային հատվածների
	Մարտավարություն	Մարտավարությունները այն կոնկրետ գործողություններն են, որից բաղկացած է ողջ ռազմավարությունը: Յուրաքանչյուր գործողություն կազմելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Ուղերձի մատչելիությանը Տոնի դրական լինելուն Լսարանի բնույթին Ժամանակային նպատակահարմարությանը Դաշնակիցներին Ռեսուրսներին Թիրախին

Համայնքային գործողություններ

2014 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում «Տեղական իրավապաշտպանության խթանում» ծրագրի մասնակիցները ներկայացրել և իրականացրել են յոթ կարճաժամկետ ծրագիր: Իրականացված ծրագրերի թեմաները բազմազան են, թիրախները նույնպես: Ընդհանուր է այն, որ բոլոր ծրագրերի դեպքում առկա են խիստ սահմանափակ ֆինանսական ռեսուրսներ և ժամանակ, ինչը ստիպում է ավելի հստակ սահմանել առաջնահերթությունները և ավելի մանրակրկիտ պլանավորել և վերանայել գործողությունները և ռեսուրսների օգտագործումը:

Աշտարակ

Հիմնախնդիր

Ըստ Աշտարակ քաղաքի թիմի, **բազմաթիվ քաղաքացիներ ունեն սոցիալական, իրավական և այլ բազում խնդիրներ, սակայն չգիտեն, թե որտեղ և ինչ կարգով պետք է դրանք ներկայացնել:** Թիմի համոզմամբ անհատական հանդիպումները և անմիջական զրույցները իրավունքների և ազատությունների վերաբերյալ, մարդկանց կօգնեն լինել առավել ակտիվ, համարձակ և հետևողական սեփական իրավունքների պաշտպանության հարցում, **քանի որ պաշտպանված է նա, ով իրազեկված է**:

Գործողություն

Համայնքի բնակիչներին հուզող խնդիրները, հարցերը, առաջարկությունները համապատասխան պատկան մարմիններին սահմանված և ճիշտ ձևաչափով ներկայացնելու, դրանց հնարավոր լուծումները ստանալու իրավունքի ապահովման նպատակով իրականացվել են անհատական հանդիպումներ համայնքի բնակիչների հետ, որոնց ընթացքում թիմի անդամները լսել են բնակիչների խնդիրները, ուղղորդել են նրանց դեպի խնդրի լուծման լավագույն տարբերակը:

Այցելությունների ընթացքում թիմը համոզվել է, որ քաղաքացիները իսկապես ունեն բազմաթիվ խնդիրներ, ինչպես սոցիալական, այնպես էլ իրավական, սակայն հիմնականում չգիտեն, թե որտեղ և ինչ կարգով

պետք է դրանք բարձրաձայնել՝ լուծում ստանալու ակնկալիքով: Թիմի անդամները լսել են բնակիչների խնդիրները, անհատական բնույթի խնդիրների դեպքում առաջարկել են օգնել պատարստելգրություն, դիմում, բողոք և անձամբ կամ փոստային առաքման միջոցով գրությունը համապատասխան մարմնին ներկայացնելու համար, սակայն քաղաքացիները ստացված տեղեկությունները համարել են բավարար հետագա քայլերն ինքնուրույն կատաելու համար:

Քաղաքացիների կողմից հնչել են նաև ժառանգության, սեփականության, պայմանագրային և ՀՀ քաղաքացիական օրենսգրքին առնչվող այլ հարցեր, որոնց լուծման համար թիմը նրանց տրամադրել է հանրային պաշտպանի հետ կապ հաստատելու բոլոր հնարավոր միջոցները կամ ուղղորդել այլ փաստաբանների մոտ:

Արդյունք

Ծրագրի շրջանակներում թիմն այցելել է շուրջ 70 բակ՝ ներառյալ բազմաբնակարան շենքեր, հանդիպումներ է ունեցել համայնքի բնակչության հետ՝ կատարելով անհատական այցելություններ և բաժանելով տեղեկատվական բուկլետներ: Որպես հանրային լուծում պահանջող խնդիր բազմիցս նշվել է Աշտարակի քաղաքային այգու հարցը, որն ինչպես պարզվել է, որ արդեն իսկ ընդգրկված է ավագանու նիստերի օրակարգում:

Քաղաքացիների ներկայացրած անհատական հարցերն ու խնդիրները եղել են բազմաբնույթ: Տարեց բնակիչները հիմնականում դժգոհել են ծերության թոշակի չափի հաշվարկումից: Օգտագործելով կենսաթոշակի էլեկտրոնային հաշվիչը, թիմի անդամները տեղում հաշվարկել են քաղաքացիների թոշակը և պարզել, որ անճշտություններ չկան:

Հարցվածների մոտ 30%-ը որպես հիմնախնդիր նշել է գործազրկությունը: Խնդրի որոշակի լուծման համար թիմը քաղաքացիներին ուղղորդել է Աշտարակ քաղաքի զբաղվածության կենտրոն գրանցվելու, պարզաբանել է կենտրոնի գործունեությունը, ներկայացրել կենտրոնի կողմից իրականացվող ծրագրերը:

Երեխաների իրավունքների հետ կապված հարցերի լուծման առումով թիմն ապահովել է Արագածոտնի մարզպետարանի կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի մասնագետների հետ կապը:

Ծրագրի ավարտից հետո թիմը շարունակում է քաղաքացիներից ստանալ հեռախոսազանգեր, որոնցով հայտնում են, որ իրենց խնդիրը լուծվել է կամ շարունակում են խորհրդատվություն ստանալ:

Քանի որ զբաղվածության խնդիրը առավել հաճախ է հանդիպել և խնդրի լուծումը կնպաստի համայնքի բնակիչների սոցիալական, կրթական և իրավագիտակցական մակարդակի բարձրացմանը, թիմն իր առջև նպատակ է դրել հետագայում ֆինանսական ռեսուրսների առկայության դեպքում իրականացնել զբաղվածությամբ ապահովման նպաստող ծրագրեր:

Մարտահրավերներ

Ծրագրի իրականացման ընթացքում թիմն ունեցել է մի շարք մարտահրավերներ: Հիմնական մարտահրավերն այն է, որ քաղաքացիները չեն հավատում, որ իրենց խնդիրները լուծելի են: Քաղաքացիները չունեն անհրաժեշտ գիտելիքներ, համարձակություն իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ մասին: Հենց այս անհամարձակության պատճառով էլ քաղաքացիները հրաժարվել են իրենց անձնական տվյալները ներկայացնելուց՝ պնդելով, որ չեն ցանկանում, որ իրենց անունը որևէ տեղ նշվի:

Արտաշատ

Հիմնախնդիր

Արտաշատ քաղաքն ունի բազմաթիվ խնդիրներ, որոնք բնորոշ են նաև այլ քաղաքների: Արտաշատի թիմի կարծիքով, այդ խնդիրներից է աղբահանության հիմնախնդիրը, որի դեպքում պատճառը ոչ այնքան համայնքային իշխանությունների անբարեխղճությունն է, այլ բնակիչների անփութությունը, որի պատճառով աղբը կուտակվում է աղբամանների շուրջ, երբ աղբամանները դատարկ են: կենցաղային աղբի համար հատկացված աղբամաններում հայտնվում են շինարարական և արտադրական բնույթի թափոններ: Քաղաքի ծայրամասերում, որտեղ ազատ տարածքներ են, առաջանում են աղբակույտներ: Թիմի համոզմամբ, սա վկայում է այն մասին, որ համայնքի բնակիչների մոտ համայնքը և հատկապես քաղաքի ծայրամասերը չեն ընկալվում որպես իրենց ընդհանուր տան մի մաս: Վերոնշյալն են փաստում նաև այն դեպքերը, երբ մարդիկ, անցնելով քաղաքի շատ աղբամանների կողքով, իրենց աղբը նետում են քաղաքի անուշադրության մատնված ծայրամասերում: Նմանատիպ

անփութության արդյունքում մի շարք աղբամաններ դուրս են գալիս կիրառությունից նախատեսված ժամանակից շուտ: Վերջին շրջանում անփութության հետևանքով Արտաշատ քաղաքում 50 աղբման է այրվել, որոնց ընդհանուր արժեքը կազմում է ավելի քան 2.000.000 դրամ:

Խնդրի լուծման համար թիմն առաջնահերթ է համարում ձևավորել հանրային հսկողություն և համապատասխան գիտակցությունը, որի նպատակով քաղաքում անհրաժեշտ է տեղադրել իրազեկման ցուցանակներ և պաստառներ:

Գործողություն

Մաքուր «Տուն-քաղաք» ծրագրի շրջանակներում թիմը փորձել է ցուցանակների և պաստառների միջոցով քաղաքացիների մեջ արթնացնել «տուն-քաղաք» գիտակցությունը: Ցուցանակների տեղադրման համապատասխան վայրեր գտնելու համար թիմը տեղեկատվության հարցում է ներկայացրել Արտաշատի քաղաքապետարան: Քաղաքապետարանը, գնահատելով նախաձեռնությունը, տրամադրել է տեղեկատվությունը՝ աջակցելով հետագա գործողություններին: Քաղաքապետարանի հետ համագործակցության արդյունքում հանդիպում է տեղի ունեցել Արտաշատ քաղաքի ճարտարապետի հետ, որի ժամանակ թիմը ներկայացվել է գաղափարի իրագործման էությունը և նպատակահարմարությունը, իսկ ճարտարապետն ուղղորդել է թիմին աղբահանության և քաղաքի սանիտարական վիճակի մասին որոշ փաստական տվյալներ տրամադրելով:

Ցուցանակների, պաստառների և պիտակների ազդեցիկությունն առավելագույնի հասցնելու համար թիմը դիմել է մասնագետների աջակցության՝ ցուցանակների ամրությունը, և անվտանգությունը, պաստառների բովանդակությունը, նկարների մատչելիությունը, որակը և երկարաժամկետ կիրառությունն ապահովելու համար:

Արդյունք

Ծրագրի շրջանակներում քաղաքում տեղադրվել են ցուցանակներ, որոնք կոչ են անում հարգել սեփական քաղաքը ու արմատավորել «տուն-քաղաք» և «ծայրամասը ևս քաղաքի մասն է» հասկացողությունները: Տարված աշխատանքները լուսաբանվել են տեղական լրատվամիջոցներով, ինչն էլ ավելի է բարձրացրել ծրագրի արդյունավետությունն ու իրականացված գործողությունների կարևորությունը քաղաքացիների համար: Աշխատանքը հետաքրքրություն և շահագրգռվածություն է առաջացրել ինչպես երիտասարդների, այնպես էլ տարեցների շրջանում: Արտաշատ քաղաքի ճարտարապետ Կարեն Պողոսյանի կողմից առաջարկվել է ծրագիրը դարձնել շարունակական, դրանով էլ փորձելով որոշ չափով լուծել աղբահանության խնդիրն Արտաշատ քաղաքում:

Մարտահրավերներ

Ծրագրի իրականացման հիմնական մարտահրավերը ժամանակային սղության պայմաններում լայնածավալ գործողություններ նախաձեռնելն էր: Որոշակիորեն ժամանակատար է եղել Արտաշատի քաղաքապետարանից ցուցանակների տեղադրման վայրերի մասին տեղեկատվության և թույլտվություն ստանալու գործընթացը:

Ծրագրի իրականացման համար մարտահրավեր էր նաև այն, որ Արտաշատ քաղաքում նման նախագծեր հաճախ չեն իրականացվում, ինչը ընդհանուր թերհավատություն է առաջացնում, սակայն սեփական ուժերին վստահելու ու համառության շնորհիվ թիմը կարողացել է ոչ միայն իրականացնել նախատեսված գործողություններն այլև ներգրավել այլ մարդկանց:

Արմավիր

Հիմնախնդիր

Արմավիր քաղաքի թիմի նախնական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ քաղաքի **մթերային խանութներում խախտվում են սպառողների շահերը, ինչն արտահայտվում է նրանով, որ նախապես կշռված ապրանքների գնապիտակին նշված կշիռն իրականությանը չի համապատասխանում, կշեռքների մեջ կա անճշտություն, իսկ մանրը վերադարձնելիս՝ խանութները հաշվարկը կատարում են ի վնաս գնորդի:**

Արմավիր քաղաքի թիմը մտահոգ էր, որ քաղաքի ոչ բոլոր բնակիչներն են գիտակցում, որ իրենց խաբում են, իսկ իրազեկները կամ

վերակշռում են ապրանքը կամ դադարում գնումներ կատարել տվյալ խանութից: Բացի այդ, թիմը պնդում էր, որ գնային կլորացումները 5-ի փոխարեն սկսվում են 1-ից՝ ի վնաս գնորդի: Այսինքն, եթե որևէ ապրանքի արժեքը 62 դրամ է, գնորդը վճարում է 70 դրամ, այն ինչ՝ պետք է վճարեր 60 դրամ:

Թիմը գտնում է, որ բնակչության մեծ մասն իրազեկված չէ իր իրավունքների մասին, մտածում է, որ ոչինչ չի կարող անել, խուսափում է բարձրաձայնելուց և ավելին է վճարում:

Գործողություն

Սպառողների շահերի պաշտպանության նպատակով՝ Արմավիրի թիմն իրականացրել է հետազոտություն Արմավիր քաղաքի 50 (ի սկզբանե նախատեսված 30-40-ի փոխարեն) մթերային խանութներում: P.S. Be Sharp խորագրով ծրագրի ընթացքում թիմը ձգտել է բացահայտել չարաշահումները, իրազեկել հանրությանը, պայքարել չարաշահումների դեմ:

Ծրագրի իրականացման համար թիմը ձեռք է բերել մարտկոցով աշխատող էտալոնային կշեռք: Թիմն ապահովել է, որպեսզի կշեռքը լինի ստուգված և կապարակնքված: Հավաստիության համար ստուգման և կապարակնքման ընթացքը տեսանկարահանվել է անընդհատ ռեժիմով:

Ծրագրային թիմին անդամները, կշեռքով այցելելով դիտարկվող խանութները, տեղում վերակշռել են նախապես կշռված և տուփերում կամ պոլիեթիլենային տոպրակներում փակված ապրանքը և համեմատել են այդ ցուցանիշը գնապիտակի վրա նշված կշռի հետ: Թիմը նաև ստուգել է կշեռքների ճշգրտությունը և հետևել մանրի վերադարձման գործընթացին: Թիմի

անդամները տեսանկարահանել են նաև այս աշխատանքը: Ճիշտ աշխատող կշեռք ունեցող խանութների դռներին փակցվել են «Ուղիղ կշեռք» անվանմամբ խրախուսական թերթիկներ:

Հանրային ընդհանուր իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով տպագրվել են գնորդի իրավունքների մասին իրազեկման թերթիկներ և տարածվել Արմավիր քաղաքում: Թերթիկը պարունակել է սպառողի իրավունքների մասին ՀՀ օրենքներից քաղվածքներ, խորհուրդներ, կոնտակտային տվյալներ՝ խախտումներ նկատելու դեպքում ահազանգելու և իրազեկելու համար:

Կատարված աշխատանքների հաշվետվությունը և բարեփոխման առաջարկությունները հրապարակվել են համացանցում (www.asparez.am և www.facebook.com) և ներկայացվել սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող պետական և ոչ պետական կառույցներին: Բացի այդ Արմավիրում կազմակերպվել են քննարկումներ ակտիվ բնակիչների և դիտարկված խանութների տնօրենների մասնակցությամբ: Այդ քննարկումների ժամանակ ներկայացվել են դիտարկված արդյունքները, բացահայտումները և առաջարկությունները: Ծրագրի ավարտին պատրաստվել է գործողությունները և արդյունքները ներկայացնող հաշվետվություն և փոքրիկ ֆիլմ, որը ցուցադրվել է տեղական հեռուստաընկերություններով:

Արդյունք

Դիտարկումների արդյունքում բացահայտվել են խախտումներ և չարաշահումներ 10 մթերային խանութներում, որոնցից 1-ում առկա բոլոր կշեռքների ցուցանիշները տարբերվել են միմյանցից: Դիտարկված խանութներից երեքում կշեռքն աշխատել է ի վնաս խանութի, ինչի մասին տեղյակ է պահվել թիմի կողմից: Մի շարք դեպքերում բացահայտվել է, որ կշեռքը ճշգրիտ է աշխատում, սակայն նախապես կշռված ապրանքների կշիռը ճիշտ չէ նշված:

Արմավիրի թիմի գնահատմամբ գործողությունն ունեցել է բացառապես դրական արդյունք: Սկզբնական այցերից հետո որոշ ոչ ճշգրիտ կշեռքներ ունեցող խանութների սեփականատերեր գիտակցել են, որ իրենց բիզնեսի բարգավաճման երաշխիքը լավ հեղինակությունն է, հետևաբար նաև ազնիվ աշխատանքը: Արդյունքում նրանք ուղղել են կշեռքները և թիմին հրավիրել երկրորդ ստուգայցի՝ արդարանալով, թե կշեռքների անճշտությունը կլիմայական պայմաններից է եղել:

Սեփականատերերը խոստացել են, որ հաջորդ անսպասելի այցերից և ոչ մեկի դեպքում քաղաքացիներն իրենց խաբված չեն զգա:

Թիմի անդամները նաև բացատրել են հաճախորդների մանրի վերադարձման սկզբունքը՝ ստիպելով սեփականատերերին հարգել սպառողների իրավունքները:

Մարտահրավերներ

Քաղաքացիական վերահսկողության սահմանումը մասնավոր և պետական ոլորտներում հիմնականում ընդվզումով է ընդունվում, ինչին պետք է պատրաստ լինել: Թիմը նշում է, որ նույնիսկ ճշգրիտ աշխատող խանութներում խուճապի են մատնվել իրենց այցից, ինչը հուշում է, որ նրանք փորձել են ինչ-որ բան թաքցնել: Արմավիրի թիմը ծրագրի ընթացքում հանդիպել է մարտահրավերների և խնդիրների, սակայն թիմի առանձնահատկությունն էր սկզբունքայնությունը և սպառնալիքների նկատմամբ հումորային վերաբերմունքը, ինչը նպաստում է թիմի ներքին համերաշխությանը և արդյունավետ աշխատանքին:

Թիմը կազմել է խանութների սեփականատերերի արտահայտությունների տասնյակը, ինչը հիանալիորեն ամփոփում է հնարավոր ճնշման միջոցները: Տասնյակը ներկայացնում ենք առանց խմբագրման

10. Բայց Դուք իրավունք ունե՞ք
9. Գնացեք վերևները տեսեք ինչ են անում, էկել եք մեզ մոտ….
8. Ձեր դեմքը շատ ծանոթ է:
7. Մաման, պապան միշտ գալիս են էստեղ, ճանաչում են ինձ:
6. Մենք օրվա ընթացքում հաճախորդների համար շատ բարի գործեր ենք անում:
5. Ձեր տնօրենի զանգից հետո միայն թույլ կտանք:
4. Մեկը մի քանի ժամանակ առաջ եկավ 5 000 տվեցի գնաց:
3. Դուք իմ տղային չե՞ք ճանաչում:
2. Մենք քաղաքի համար շատ լավ գործեր ենք իրականացնում, բարեգործություններ անում:
1. Կրպակ-ի /խանութների ցանց/ տնօրենն է Ձեզ էստեղ ուղարկել:

Գավառ

Հիմնախնդիր

Ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ Գավառ քաղաքում, **բժշկական ոլորտը ամենակոռումպացված ոլորտներից է**, ինչը Գավառի թիմի գնահատմամբ առավել բարդ խնդիր է՝ հաշվի առնելով քաղաքի ընդհանուր սոցիալական ծանր վիճակը: Թիմը գտնում է, որ բնակիչների մոտ ցածր է իրավագիտակցության մակարդակը, քչերն են տեղյակ իրենց իրավունքներից: Իսկ քանի որ հարցը վերաբերում է

առողջությանը, ապա մարդիկ պատրաստ են վճարել ցանկացած գումար՝ ակնկալելով որակյալ բուժսպասարկում: Գավառի թիմի գնահատմամբ բժիշկների կողմից քաղաքացիների առողջության իրավունքի խախտումները բազմաթիվ են, սակայն բնակիչների մեծ մասն իրազեկված չէ անվճար ծառայությունների կամ պետության կողմից սահմանված արտոնությունների վերաբերյալ:

Հիվանդանոցներում և պոլիկլինիկաներում տեղադրված չեն անվճար ծառայությունների ցանկը կամ վճարովի ծառայությունների գնացուցակը, ինչն ինքնին չարաշահումների վտանգ է հանդիսանում:Գործողություն

Բնակչությյան տարբեր խմբերին անվճար բժշկական ծառայությունների մասին իրազեկելու և խախտումները բացահայտելու նպատակով՝ Գավառի թիմն իրականացրել է այցելություններ և հարցումներ, պատրաստել տեղեկատվական թերթիկներ:

Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում էր անվճար և վճարովի ծառայությունների ցանկի ձեռքբերում և տարածում, սակայն պարզվել է, որ այդ ցանկերը քաղաքացիների համար հասանելի չեն: Ծրագրային թիմն ինքնուրույն մշակել է ցանկը՝ ելնելով կառավարության տարբեր որոշումներից և տարածել դրանք:

Թիմը նաև հարցումներ է անցկացրել մոտ 250 բնակիչների շրջանում բացահայտելու բուժհաստատությունների կողմից նրանց իրավունքների խախտման դեպքերը: Հարցումների համար ընտրվել է չորս խումբ՝ հղիների, հաշմանդամության կարգ ունեցող քաղաքացիներ, մինչև 7 տարեկան երեխաների ծնողների, և բնակչության այլ խմբերի հետ:

Արդյունք

Ծրագրի ընթացքում թիմը հանդիպել է մի շարք խոչընդոտների, սակայն կարողացել է հասնել պլանավորած արդյունքին՝ պատշաճ կերպով իրազեկելով բազմաթիվ քաղաքացիների:

Գավառի պոլիկլինիկա բազմաթիվ այցելությունների, թիմի համառության և պահանջատիրության շնորհիվ պոլիկլինիկայում բժիշկներն ու բուժքույրերը առավել զգոն են և հոգատար են

հիվանդների նկատմամբ: Թիմն անգամ ականատես է եղել, թե ինչպես է բժիշկը հրաժարվում հիվանդի կողմից տրվող քաղցրավենիքից՝ նշելով, որ դա իր աշխատանքն է և «նման բաներ պետք չէ անել»:

Թիմը նշում է, որ Գավառում արդեն սկսել են քննարկել, թե կա երիտասարդների մի խումբ, որը կարողանում է և պատրաստ է պաշտպանել իրենց շահերը: Թիմի անդամներին արդեն դիմում են խորհրդատվության՝ վճարովի և անվճար բժշկական ծառայությունների վերաբերյալ:


ՅԱՆԿ

ԳԵՏՈՒԹՅԱՆ, ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՄԱԿԱՐԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԱՆՑԱԼՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՂ ԱՌՈՒՆՋԻՆ (ՀՈՍՈՒԿ) ԽՄԲԵՐԻ

- Աղքատության (ցնցումների) նպաստի հասանելիության ընդգրկված 3600 և ավելի բարձր անապահովության մակարդակ ունեցող նպաստառուներ
- 1-ին խմբի հարցմանդամներ
  - 2-րդ խմբի հարցմանդամներ
  - 3-րդ խմբի հարցմանդամներ
  - Հաշմանդամություն երեխաներ (մինչև 18 տարեկան)
  - Հաշմանդամություն մեծ պատճառների մասնակիցներ և նրանց հասանելիության անձինք
  - Միայնակաց երեխաներ (մինչև 18 տարեկան)
  - Աշխատող երեխաներ (մինչև 18 տարեկան)
  - Աշխատող ծնողական խնամքի մնացած երեխաներ (մինչև 18 տարեկան) և աշխատող ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք (18-23 տարեկան)
  - Բազմազավակ (մինչև 18 տարեկան 4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող) ընտանիքների երեխաներ
  - Հաշմանդամի համապատասխան պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայությունների պարտադիր անհրաժեշտությունները կատարելիս զինված (մասնագած) զինծառայողների ընտանիքների անդամներ
  - Զորակոչի պարտի վերացման աշխատանքների մասնակիցներ
  - Բռնադատվածներ
  - Բժշկասոցիալական փորձաքննության իրավասու պետական մարմնի ուղեգրով լրացուցիչ բժշկական հետազոտության ենթարկվողներ
  - Հաշմանդամներից բաղկացած ընտանիքների երեխաներ (մինչև 18 տարեկան) մինչև 7 տարեկան երեխաներ
  - 14-15 տարեկան արական սեռի, նախազորակոչային և զորակոչային տարիքի անձինք (հիվանդանոցային բժշկական օգնություն, իսկ զորակոչային տարիքի անձանց նաև հիվանդանոցային փորձաքննություն), ինչպես նաև խաղաղ ժամանակ պարտադիր հանձնարարների ու զորակոչիկների կանչված զինապարտանները սանիտարական և հիվանդանոցային փորձաքննության մասով
  - Քնարարարներ և նրանց ընտանիքների անդամներ
  - Հեղրակալվածներ, կալանավորված անձինք և ազատազրկման դատապարտվածներ
  - Մանկասանդերում և ծերանոցներում խնամվողներ
  - Մինչև 18 տարեկան դիպարանների հանդուրության տակ գտնվող երեխաներ.
  - Մինչև 8 տարեկան, ինչպես նաև 12 տարեկան դիպարանի m. 65 տարեկան և ավելի բարձր տարիքի անձինք (մասնագիտացված ստամատոլոգիական բուժօգնության գծով).
  - Վերարտադրության տարիքի կանայք հղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանում (Հաշմանդամի համապատասխան ատոլոգս պետության նախարարության կողմից սահմանված կարգով)
  - Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձինք

Հարցումների իրականացման համար աշխատանքային խումբը մշակել է 4 տիպի հարցաթերթիկ՝ հղիների, մինչև 7 տարեկան երեխա ունեցողների, հաշմանդամություն ունեցողների և բնակչության խոցելի խմբերի համար:

Ծրագրում ընդգրկված 12-13 անդամները, բաժանվել են 4 խմբի և անցկացրել հարցումներ մոտ 250 բնակչի շրջանում, որից՝ հղիների (57), մինչև 7 տարեկան երեխաների ծնողների (70), հաշմանդամների (35) և բնակիչների տարբեր խավերի (85) հետ:

Հարցման արդյունքում պարզվել է, բազմաթիվ են դեպքերը, երբ բնակիչը տեղյակ է, որ ծառայությունն անվճար է և գումարի պահանջով խախտվում է իր իրավունքը, բայց միևնույն է վճարել է դրա դիմաց, քանի որ համոզված է, որ եթե չվճարի, չեն սպասարկի:Այնուամենայնիվ ընդհանուր առմամբ 250 հարցվող բնակիչների մոտ 70%-ը տեղյակ չի եղել, որ կան անվճար ծառայություններ, կամ պետության կողմից սահմանված արտոնություններ:

Թիմը նշում է, որ իրականացված գործողությունների արդյունքում, չնայած մեծ դժվարություններով, սակայն կարողացել են ստիպել բուժհաստատություններին՝ հաշվի նստել մեր ծրագրային թիմի հետ, հիվանդանոցում, հիմնականում ծննդատանը, որտեղ ամենամեծն է

կաշառակերության մակարդակը, և պոլիկլինիկայում, հատկապես երեխաների և ընտանեկան բժշկի հետ կապված բաժանմունքներում որոշակիորեն զգոշանում են գումար վերցնել: Բացի այդ այն բնակիչները, ովքեր ի վիճակի չեն վճարել և մինչ այդ պարզապես տեղյակ չեն եղել, որ այդ ծառայությունները անվճար են, արդեն սկսել են բողոքել և դիմել թիմին՝ իրենց իրավունքների խախտման հետ կապված:

Իրականացված հարցումների արդյունքները նույնպես խոսուն են.

Այսպես, ընդհանուր առմամբ, 250 հարցվողների մոտ 70%-ը ընդհանրապես չգիտեր անվճար ծառայությունների առկայության մասին, 20%-ը գիտեր, բայց շարունակում էր վճարել, 7 %-նշել է, որ խնդիրը լուծելի չէ, իսկ 3%-ը նշել է, որ ոչ թե գումար է վճարում, այլ շնորհակալություն է հայտնում՝ զանազան նվերների տեսքով:

Հաշվի առնելով անիրազեկության այսպիսի բարձր ցուցանիշը՝ թիմը տեղեկատվական թերթիկներ է բաժանել վերանշյալ 70% հարցվողներին և հանգամանալից բացատրել իրենց իրավունքները՝ տրամադրել նաև կոնտակտային տվյալներ հետագա խորհրդակցության համար: Բուժհաստատություններում տեղադրվել են ցուցանակներ, որոնցից կարող են օգտվել այցելուները:

Պատրաստվել է նաև տվյալների ամփոփում, որից հետագայում կարելի է օգտվել նմանատիպ ծրագրեր իրականացնելու համար:

Առանձին խմբերի շրջանում իրականացրած հարցումները արդյունքները հետևյալն են՝

Մինչև 7 տարեկան երեխաների 70 ծնողները

- ✓ Վճարե՞լ եք արդյոք բժշկական ծառայության դիմաց
  Այո – 57 Ոչ - 13

- ✓ Եթե այո, ապա որքան
  2000 - 50 000 ՀՀ դրամ (առանց դեղորայքի գումարի),

- ✓ Եթե ոչ, ապա ինչու
  Բացի օրենքի պահանջը վկայակոչելը, քաղաքացիները նշել են նաև այլ պատճառներ՝ բժշկի ծանոթ լինելը, առաջին անգամվա սպասարկման անվճար լինել

- ✓ Ո՞վ է նշել գումարի չափը և հիմնավորե՞լ է արդյոք, թե ինչ վճար է կատարվում
  Հարցվողները հիմնականում նշել են՝ որ գումարի չափը հայտնել է բժիշկը կամ բուժքույրը, և վճարում են, որովհետև «անվճար ո՞վ կբուժի իրենց երեխային»

- ✓ Տեղյա՞կ եք, որ ըստ ՀՀ օրենքի, մինչև 7 տարեկան երեխայի բուժումն անվճար է
  Այո – 22 Ոչ - 48

- ✓ Այժմ երբ գիտեք, որ մինչև 7 տարեկան երեխայի բուժումն անվճար է, կպայքարե՞ք ձեր երեխայի առողջապահական իրավունքի համար

Այո – 50 Կախված հանգամանքներից - 20

Հղի և նոր ծննդաբերած կանանց շրջանում անցկացվել է 57 հարցում:

- ✓ Վճարե՞լ եք արդյոք բժշկական ծառայության դիմաց

Այո – 49 Ոչ - 8

- ✓ Եթե այո, ապա որքան

30 000 - 150 000 ՀՀ դրամ

- ✓ Եթե ոչ, ապա ինչու

Ծննդօգնությունը ՀՀ-ում անվճար է

- ✓ Ո՞վ է նշել գումարի չափը և հիմնավորե՞լ է արդյոք, թե ինչ վճար է կատարվում

Հարցվողները հիմնականում նշել են՝ որ գումարի չափը հայտնել է բժիշկը կամ բուժքույրը, և վճարում են, որովհետև «կարգն է այդպիսին»

- ✓ Տեղյա՞կ եք, որ ըստ ՀՀ-ում ծննդօգնությունը և ծննդաբերությունը անվճար է

Այո – 15 Ոչ - 42

- ✓ Այժմ երբ գիտեք, որ ՀՀ-ում ծննդօգնությունը և ծննդաբերությունը անվճար է, կպայքարեք ձեր առողջապահական իրավունքի համար

Այո – 37 Ոչ – 20 («դա միշտ էլ եղել է, բոլորը վճարել են, մենք էլ ենք վճարելու»)

Բնակիչների տարբեր խմբերի հետ անցկացվել է 85 հարցում:

- ✓ Տեղյա՞կ եք, որ ՀՀ - ում աղքատության (ընտանեկան) նպաստի համակարգում ընդգրկված 36.00 և ավելի բարձր անապահովության միավոր ունեցող նպաստառուների բժշկական օգնությունն անվճար է

Այո – 15 Ոչ - 70

- ✓ Տեղյա՞կ եք, որ ՀՀ –ում միածնող երեխաների (մինչև 18 տարեկան) բժշկական օգնությունն անվճար է

Այո – 22 Ոչ - 63

- ✓ Տեղյա՞կ եք, որ ՀՀ-ում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների (մինչև 18 տարեկան) և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց (18-23 տարեկան) բժշկական օգնությունն անվճար է

Այո – 20 Ոչ - 65

- ✓ Տեղյա՞կ եք, որ ՀՀ-ում բազմազավակ (մինչև 18 տարեկան 4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող) ընտանիքների երեխաների բժշկական օգնությունն անվճար է

Այո – 10 Ոչ - 75

- ✓ Տեղյա՞կ եք, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամների բժշկական օգնությունն անվճար է

  Այո – 35 Ոչ - 50

- ✓ Տեղյա՞կ եք, որ ՀՀ-ում մինչև 7 տարեկան ու 65 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց համար մասնագիտացված ստոմատոլոգիական բուժօգնությունն անվճար է

  Այո – 60 Ոչ – 25

Հաշմանդամության կարգ ունեցող անձանց շրջանում անց է կացվել 35 հարցում:

- ✓ Օգտվո՞ւմ եք/օգտվե՞լ եք արդյոք Գավառի բուժհաստատությունների ծառայություններից՝ նախատեսված հաշմանդամության կարգ ունեցողների համար

  Այո – 29 Ոչ - 6

- ✓ Վճարում եք/վճարել եք այդ ծառայություններից օգտվելու համար

  Այո – 5 Ոչ - 30

- ✓ Տեղյա՞կ եք, որ ՀՀ –ում հաշմանդամության նշված խմբերին պատկանող անձանց բուժօգնությունն անվճար է

  Այո – 30 Ոչ – 5

Մարտահրավերներ

Ծրագրային թիմը նշում է, որ գործողությունների մշակման փուլում չէին կարող կանխատեսել այն խոչընդոտները, որոնց հանդիպեցին իրականացման ընթացքում: Թիմի համար անակնկալ էր բուժհաստատությունների խիստ բացասական վերաբերմունքն իրենց հարցումների նկատմամբ, տնօրենների կողմցի բանկացելու պատրաստակամություն հայտնվել է միայն ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի Գեղարքունիքի մարզի ներկայացուցչի միջամտությունից հետո: Թիմի համար լրջագույն մարտահրավեր է եղել այն, որ հենց հիվանդանոցում գտնվող հիվանդները, հատկապես նորածին մայրերը սկսել են պաշտպանել բժիշկներին և բուժաշխատողներին և արդարացնել նրանց կողմից գումարի գանձումը: իրավունքների պաշտպանության ընթացքում բավականին հաճախ ենք բախվում այն խնդրին, որ անձն ում իրավունքները փորձում ենք պաշտպանել, ընդդիմանում է պաշտպանությանը, նախընտրում զոհի՝ ավելի պասիվ կարգավիճակը, ինչը կարող է հուսահատեցնող լինել թիմի համար:

Նույնանման տեսակետներ հնչել են նաև հիվանդանոցից դուրս՝ հարցումների ժամանակ, երբ թիմին լսելուց հետո քաղաքացիները հայտարարել են, թե «շատ լավ բան եք անում, բայց այս ոլորտում բան չեք կարող փոխել, միևնույն է բժիշկները պետք է ուզեն, մենք էլ պետք է տանք»: Մարտահրավեր է եղել նաև այն, որ բուժհաստատությունների կողմից տարբեր մեթոդներով ճնշում է

գործադրվել թիմի անդամների վրա՝ գործողությունը դադարեցնելու նպատակով: Ճնշումների արդյունքում թիմի անդամների մի մասը հրաժարվել է շարունակել աշխատանքը: Թիմի համար մարտահրավեր է եղել նաև տեխնիկական ռեսուրսների՝ տեսաձայնագրող և լուսանկարող սարքերի բացակայությունը:

Չնայած բվազմաթիվ խնդիրներին, թիմին հաջողվել է բավականին արդյունավետ ու արժեքավոր աշխատանք կատարել, ինչը կարող է հետագայում կիրառվել այլ համայնքներում խնդիրների բացահայտման և քաղաքացիների իրազեկման համար:

Գորիս

Հիմնախնդիր

ՄԱԿ-ի «Ռիո+20» գործընթացի շրջանակներում ձևավորված **«Կայուն քաղաքներ-կանաչ ճարտարապետության զարգացում»** ենթահանձնաժողովը, ՀՀ քաղաքաշինության նախարարության նախաձեռնությամբ իրականացնում է **«Էկո քաղաք» ծրագիր, որի համար որպես պիլոտային քաղաք, ընտրվել է Գորիսը:**

Բնապահպանական բազմաթիվ խնդիրներ ունեցող քաղաքի բնակիչները, սակայն, իրազեկված չեն ծրագրի մասին, անտեղյալ են, թե ինչ ազդեցություն կարող է ունենալ ծրագիրը քաղաքի էկոհամակարգի պահպանման վրա: Քաղաքացիները հնարավորություն չունեն նաև ներկայացնել իրենց կարծիքով առավել կարևոր մարտահրավերը, խնդիրները, որոնք ունի Գորիս քաղաքը, և առաջարկել դրանց լուծումներն ընդգրկել պիլոտային նախագծի մեջ:

Տեղական իշխանությունները նախագծի շուրջ հանրային քննարկումներ չեն կազմակերպում, գբոսաշրջային կենտրոնի հավակնություն ունեցող Գորիսի բնապահպանական ռիսկերի կրճատմանն ուղղված առաջարկությունների մշակման գործում չեն ապահովում հանրության մասնակցությունը:

Գործողություն

Հանրային իրազեկության բարձրացման նպատակով Գորիս քաղաքի թիմը կազմակերպել է հանրային քննարկումներ, որի արդյունքում մշակված առաջարկությունների փաթեթը ներկայացվել է տեղական ինքնակառավարման մարմիններին:

Նախաձեռնության մեկնարկին աջակից նամակ է ուղարկվել Գորիսի քաղաքապետ Վաչագան Ադունցին, որտեղ ամփոփ ներկայացվել է նախատեսվող գործողությունները, որից հետո քննարկում է եղել քաղաքապետի հետ: Տեղեկատվության հարցում է ուղարկվել նաև ՀՀ Քաղաքաշինության նախարար Նարեկ Սարգսյանին՝ տրամադրելու պիլոտային ծրագրի նախնական տարբերակը, որի հիման վրա իրազեկման նյութեր են պատրաստվել և տարածվել:\

Կազմակերպվել է երկու հանրային քննարկում, որին մասնակցել են հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ակտիվ երիտասարդներ:

Արդյունք

Ծրագրի արդյունքում տպագրվել և տարածվել է 200 օրինակ իրազեկման նյութ: Facebook-ում ստեղծվել է «Էկո-քաղաք Գորիսի խնդիրները» անվանմամբ խումբ[13]:

Հանրային քննարկումների ժամանակ ներկայացվել է, թե ինչ մարտահրավերներ, խնդիրներ ունի Գորիս քաղաքը, մասնավորապես, հանդիպման մասնակիցները նշել են, որ համայնքային իշխանությունները պետք է ուշադրություն դարձնեն ենթակառուցվածքներին, ինչպես նաև հանդես են եկել գաղափարներով, մասնավորապես, ստեղծել աշխատանքային խումբ, քարտեզագրել քաղաքի խնդիրները, գտնել լուծման ուղիներ: Առաջարկվել է տեղական ինքնակառավարման մարմիններին և ՀՀ քաղաքաշինության նախարարությանը ներկայացնել «Քանդակագործության սիմպոզիում» գաղափարը, որի իրականացման համար առաջարկվում է, որպեսզի համայնքի ղեկավարը քանդակագործների շրջանում մրցույթ հայտարարի՝ ապահովելով բոլոր ծախսերը: Նախատեսվում է նաև քանդակների թեմատիկայի և քանդակների տեղադրման տարածքի ընտրություն:

[13] «Էկո-քաղաք Գորիսի խնդիրները» խումբը, Facebook, https://www.facebook.com/groups/764512356964724

Հանդիպումների, հանրային քննարկումների միջոցով հասարակական ակտիվ խմբերին ներգրավելով քննարկումներին՝ Գորիսի թիմը նրանց մասնակից է դարձրել ՏԻՄ որոշումների կայացման գործընթացին: Իրականացված գործողությունները օգնել են պայքարել ընդհանուր համոզման դեմ, ըստ որի բնակիչները չպետք է մասնակցեն համայնքի կառավարմանը, պարտադիր չէ իմանան, թե ինչ ծրագրեր է իրականացնում համայնքը, ինչ գումարներ են նախատեսվում ներդրվել քաղաքի զարգացման համար կամ ինչպես է տնօրինվում տեղական բյուջեն:

Մարտահրավերներ

Թիմը նշում է, որ ծրագրի իրականացման ընթացքում հիմնական մարտահրավերը եղել է ժամանակի սղությունը: Որոշ դժվարությունների են հանդիպել տեղեկատվություն ստանալու ընթացքում, ինչի պատճառով պլանավորված գործողությունների ժամկետները խախտվել են:

Եղեգնաձոր

Հիմնախնդիր

Եղեգնաձոր քաղաքում կան **ավելի քան 80 հաշմանդամություն ունեցող երեխաներ, ովքեր** ըստ Եղեգնաձորի թիմի գնահատման՝ **դուրս են մնում հասարակության ուշադրությունից**: Նրանցից 34-ը սովորում են ներառական դասարանում, որն ըստ էության ներառական չէ, քանի որ դասերն անհատական են և նրանք հնարավորություն չունեն շփվելու միմյանց կամ այլ երեխաների հետ: 8 երեխաներ, ովքեր ավարտել են ներառական դպրոցը չունեն որևէ զբաղմունք, իսկ նրանց ծնողները չունեն աշխատելու հնարավորություն: Եղեգնաձոր քաղաքի թիմի նպատակն էր ներկայացնել հաշմանդամություն ունեցող երեխաների ցերեկային խնամքի կենտրոն ստեղծելու կարիքը, որպես հաշմանդամություն ունեցող երեխաների ժամանցի ապահովման միջոց: Կենտրոնը հաշմանդամություն ունեցող երեխաներին հնարավորություն կընձեռի սովորել այլ երեխաների հետ, դառնալ հասարակության ակտիվ անդամներ՝ օգնելով նաև հաշմանդամություն չունեցող երեխաների մոտ ձևավորել հանդուրժողականություն,

հոգատարություն և ուշադրություն իրենց հասակակիցների նկատմամբ:

Գործողություն

«Ես մենակ չեմ» խորագրով ծրագրի շրջանակներում հանրության և տեղական ինքնակառավարման մարմինների իրազեկման նպատակով կազմակերպվել է կլոր սեղան և համերգ, որոնք հնարավորություն են տվել հավաքագրել համախոհների՝ ցերեկային խնամքի կենտրոնի գաղափարն իրականություն դարձնելու նպատակով: Եղեգնաձորի թիմն իր իրականացրած գործողություններով կարողացել է գրավել մարզային և տեղական իշխանությունների ուշադրությունը: Ծրագրի շրջանակներում տպագրված բուկլետների, պաստառների, տեղեկատվական թերթիկների, ինչպես նաև կազմակերպված քննարկումների և համերգի միջոցով իրականացվել է հանրային լայն իրազեկում և ծրագրային թիմը ստացել է համագործակցության առաջարկներ պետական, հասարակական և բիզնես ոլորտներից:



ՀՈՒՇԱԳԻՐ

Մենք՝ ներքո ստորագրողներս, մի կողմից Եղեգնաձոր քաղաքի քաղաքապետ պ. Դավիթ Հարությունյանը, մյուս կողմից <<Ցերեկային խնամքի կենտրոն>> ստեղծելու նախաձեռնող խմբի համակարգող Խնկանուշ Մարկոսյանը, ստորագրեցինք սույն հուշագիրը այն մասին, որ Եղեգնաձոր քաղաքի հաշմանդամ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները՝ ըստ <<Երեխայի իրավունքների պաշտպանության օրենք>>-ի (Հոդված 8-3ուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունք) ունեն <<Ցերեկային խնամքի կենտրոն>>-ի կարիք:

Եղեգնաձոր քաղաքի քաղաքապետ՝ Դ.Հարությունյան

<<Ցերեկային խնամքի կենտրոնի>>-ի նախաձեռնող խմբի համակարգող՝ Խ.Մարկոսյան

Ք. ԵՂԵԳՆԱՁՈՐ 19.12.2014թ.

Արդյունք

Ծրագրի արդյունքում ստեղծվել է նախաձեռնող խումբ, որը ձեռնամուխ է եղել ցերեկային խնամքի կենտրոնի ստեղծմանը: Նախաձեռնող խումբը հետագա համագործակցության հուշագիր է ստորագրել Եղեգնաձորի քաղաքապետի հետ:

Հետագայում խումբը պատրաստվում է ստեղծել խորհուրդ, որտեղ արդեն ընդգրկված կլինեն ոչ միայն նախաձեռնող խմբի անդամները, այլ նաև տեղական և մարզային իշխանությունների և այլ կառույցների ներկայացուցիչներ, հաշմանդամություն

ունեցող երեխաների ծնողներ: Ներկայումս խումբը մշակվում է կանոնադրություն, ուսումնասիրում է մայրաքաղաքում, այլ մարզերում գործող ցերեկային խնամքի կենտրոնների փորձը: Խումբը նախատեսում է նաև գտնել ֆինանսավորում մասնագետների և նաև ծնողների վերապատրաստման, գույքի և սարքավորումների ձեռքբերման համար:

Մարտահրավերներ

Ծրագրի իրականացման ընթացքում չեն եղել լուրջ խնդիրներ կամ դժվարություններ, սակայն օբյեկտիվ պատճառներով եղել են շեղումներ նախատեսված գործողություններից և ժամանակացույցից: Օրինակ՝ ի սկզբանե նախատեսվում էր համերգի կազմակերպումը 2014 թ. դեկտեմբերի 3-ին՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության օրը, սակայն համերգը կազմակերպվել է ավելի ուշ, քանի նախաձեռնող խմբի անդամ՝ Ա/Ձ Վերջինե Կարապետյանի նախաձեռնությամբ և ֆինանսական աջակցությամբ երեխաներին տրվել են նվերներ, որոնք ժամանել են ուշացումով:

Իջևան

Հիմնախնդիր

Հայաստանի Հանրապետությունը 2001 թ. վավերացրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, իսկ 2010 թ. ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան: Չնայած դրան՝ **կոնվենցիայի մասին իրազեկվածությունը հատկապես հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում գտնվում է ցածր մակարդակում**: Մասնավորապես տեսողական խանգարումներ ունեցող անձինք ըստ էության զրկված են իրենց իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորությունից, քանի որ պատշաճ իրազեկված չեն այդ իրավունքների մասին: Կոնվենցիաները հասանելի չէին բրայլյան կամ աուդիո տարբերակներով:

Գործողություն

Տեսողական խնդիրներով անձանց շրջանում իրազեկության բարձրացման նպատակով՝ Իջևան քաղաքի թիմը նախաձեռնել և իրականացրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և Հաշմանդություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի

աուդիոձայնագրում: Ծրագրի ընթացքը լուսաբանվել է մամուլում, իսկ արդյունքում պատրաստված ձայնագրությունները ներկայացվել են շահագրգիռ կառույցներին և տեղադրվել են համացանցում:

Արդյունք

Ծրագրի արդյունքում թիմը կարողացել է պատրաստել բարձր որակի ձայնագրություններ, որոնք հուսով ենք լայնորեն կկիրառվեն քաղաքացիների իրազեկման համար: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի ձայնագրության ընդհանուր տևողությունը 1 ժամ 25 րոպե և 47 վայրկյան է, իսկ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի ձայնագրության ընդհանուր տևողությունը 1 ժամ 29 րոպե և 6 վայրկյան է:

Մարտահրավերներ

Ծրագրի իրականացման ընթացքում հիմնական մարտահրավերները եղել են տեխնիկական բնույթի և հաջողությամբ հաղթահարվել են:

Կազմակերպության վերաբերյալ

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը /այսուհետ՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակ/ ոչ քաղաքական, ոչ կրոնական, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը միավորում է ժողովրդավարության, հանդուրժողության, բազմակարծության և մարդու իրավունքների գերակայության սկզբունքներն արժևորող անհատների:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հիմնադրվել է 1998 թվականին որպես ՀՔԱ Հայաստանի կոմիտեի մասնաճյուղ, գրանցվել է 2001 թվականին և վերագրանցվել է 2005 թվականին ՀՀ արդարադատության նախարարությունում: Կազմակերպության գլխավոր գրասենյակը գտնվում է Լոռու մարզկենտրոն Վանաձորում: Կազմակերպությունն ունի ներկայացուցչություններ Սպիտակ և Երևան քաղաքներում: Կազմակերպության գործունեության աշխարհագրությունը ընդգրկում է ինչպես Լոռու մարզը, այնպես էլ հանրապետության ողջ տարածքը:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի տեսլականն է՝ մարդու արժանապատվության, ժողովրդավարության և խաղաղության գերակա արժեքներով ձևավորված հասարակություն,

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի առաքելությունն է՝ ազգային և տարածաշրջանային մակարդակներում քաղաքացիական նախաձեռնությունների աջակցությունն ու խթանումը, խաղաղասիրական ու իրավապաշտպանական գործունեության հզորացումը:

Կոնտակտային տվյալներ

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

Հասցե՝ ՀՀ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59
Հեռ.՝ 0322 4 22 68
Բջջ.՝ 094 04 22 68
Ֆաքս՝ 0322 4 12 36
Անվճար թեժ գիծ՝ 0 8000 12 11
Էլեկտրոնային հասցե՝ hcav@hcav.am

ՀՀ ք. Երևան, Մաշտոցի 3 շենք, բն. 21
հեռ.՝ 010 53 61 72

ՀՀ ք. Սպիտակ, Ալեք Մանուկյան 7 ա
Հեռ.՝ 099 39 61 70, 093 13 83 36

Կայք՝ http://hcav.am
Ֆեյսբուք՝ www.facebook.com/hca.vanadzor